



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4530

1877



2002

Հրատարակութիւն Զ. Կիլդորեանի գրավաճառանցի.

Ն. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ՀԵԶՈՒ  
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

6. Ե

ԱԿՁԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Պ. ՋԱՆԻ ՏՈՐԻ

Ճ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Յ Կ Պ

(Փ ռ փ ռ ի ս ծ)

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

Въ Типографіи Амбарцума Энфіаджанцъ и К°  
1877

Գրաշար 15. Գրիգորեանց և բ. Ք. Փիլիպոս  
Կիչանի Խաչ  
ԽՍՀՄ



2010

491.99-3  
лн-45

Дришпр. шілдегі міншілік:

1. Үлкен. Еңбек. Сәнгей. Шыны.

Аш. Аш. Аш. Аш. Аш. Аш.

Шың. Аш. Рығы. Рығы. Рығы.

Рығы. Рығы. Тің. Әң. Үлкен.

Аш. Аш. Аш. Аш. Аш. Аш.

Шың. Аш. Аш. Аш. Аш. Аш.

<sup>2</sup> Үлкен. Аш. Аш. Аш. Аш. Аш.

Аш. Аш. Аш. Аш. Аш. Аш.

БІЛДІРМЕЛІК  
ІНСТИТУТТА  
ВОСТОКОВЕДЕНИІ  
Академияи Наук  
СССР

Արդիշ. Համայ. Զետոն  
Հյուս. Արդ. Շնչար. Ար-  
մաք. Պահապա. Ասկանի.  
Անձնական. Խոհեմայ.  
Արդիշ. Խոհեմայ. Ասկա-  
նի. Խոհեմայ. Արդ.  
Հյուս. Վահագի. Աշ-  
մաք. Վահագի. Վահագի.  
Արդիշ. Բաշտիմ. Բաշտ.  
Գյուղ. Մարտիմ. Վահագի.  
Հյուս-շիր. Վահա-սև-սև-  
մաք. Հյուս-սև-սև-  
մաք. Առաջ. Առաջ-Բաշ-

թամակ Տառ - Առաջ  
Վահա. Վահագի. Ասկ-  
անցը անցէ. Երազիկի  
համայ. Ինչը համայ  
Տէ. Հազը հազը. Տէ. Հա-  
զը բարձունքէ. Արամի  
ուսունքէ. Արամի ելուն  
Երազունք. Արամի.  
Կրունք. Արամի Կրունք.  
Երազունք ուսունքէ. Տէ



36288-66

Հումք կուտ ար:  
Հուշակեր ունի շաբախ:  
Հանգե ունի շաբախ: Ար  
սահք պետառ անհանդ:  
Դումքը կուտ զայր:  
Անհանդ ունի զայրանդ:  
Հուշակե շիքս. Դու-  
յանցք. Հանչ. Արտակ.  
Հարսկ շաբախ. Արտոն.  
Դումք. Պայտա. Բա-  
ղէ. Դասիա. Դաշ. Եղիք.  
Արտոն. Գառնութ, իսկ

5 Դումքը ունութ: Հա-  
նչը ունի շաբախ, իսկ  
Անհանդ զայրանդ: Դու-  
յանդ ունութ անդ,  
իսկ հայր. Դույր. Հայր:  
ուր քայլութ զայրանդ:  
12 Հայ ուս սրբոր բայ:  
Ար որ հայ Շանդ կույ:  
Դումք ու զայր Եղիքը  
ունութ անդք: Օքան  
հետ կառակ չ' անդք:  
13 Ար բայցուր, զարդենու

6

շերս բայցու եկ զար  
15 գեղեցիկ շնորհեր: Դաստ  
առող ներս խով բայցու:  
Չափը ջիւնու եկ բաշտուի:  
16 Չուկ գետուի քի չեմ  
պատ: Չուի գոյր չիւն  
գոյ կրպակ: Եարուա  
բախ եղու մի զայր:  
17 Ջուր կարեր հաւ ունիք:  
Կարեի ջիւնու եկ եղ, բախ  
և ուրիշ բաներ: Չուր իր  
տեղու ներս մի սահմա

զոր, ուսուցի տուր:  
18 Վճար անցրեր ճարա  
երդրի զոր է բաշտու: 82  
Վաշուածեր բաց արե  
ր: Ճառեր ներս ս-  
20 նուշիկ երգու եկ: Վա-  
րուսու կու երես է, ան-  
21 րուսու կու սրճար է: Հօ-  
եր մեջ նախու նեցու էր,  
իսկ տարու հօր ճառա  
հայուածեր սրբու էր:  
22 Չեր տակ յատակ եւ յար

8

Կը ճանկած են պայմանական։  
 Յիւլուր սիրու է քարի  
 23 և անոնց ներքի ։ Քունաց իւ-  
 ստիր իր անհաջ կը ճափ-  
 ային։ Քարը իր տեղու  
 24 ճանակ կրնա։ Հաւ եղը թ-  
 այ տակար կրնանացուր։  
 Ըստին եւ ուղ սիրու։  
 25 Դուշտիրուր այսօր իր  
 և զ ճանին ճաւ եր զելու։  
 Քայուր տանու էր իսուր  
 փողուր ճախուր։

# ՄԵՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱԹԱԶԻՆ ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՆՁԻՒՆԵԲ, ԽՍԿԵԿՐՈՐԴԻ ՏԱՐԵԲ (\*)

Ա. Է. Ե. Ե. Օ. Ի. Ը. Ո.  
 Շ. Վ. Կ. Տ. Բ. Դ. Հ. Ի. Մ.  
 Զ. Ղ. Վ.



(\*) Տես Ուսուցիչների ձեռնարկում։

Առօգակ ԳՅԵՂՑՈՒՄ

ԺԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՅԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՐՎԱՐԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

Դозволено цензурою, г. Тифлисъ. 14 Августа 1877 года.



Հայոց պատմութեան (2)

## ԴԱՍԵՐ

1.

Կուտ	Մու	Կաղ	Սան
Նուշ	Բու	Մաշ	Ոտ
Շուն	Հուն	Նետ	Ոստ
Տուն	Բադ	Մատ	Էշ
Նա	Բան	Կէտ	Կին
Նաւ	Դաշ	Մուկ	Ուղտ
Կաւ	Դու	Մազ	Դաս
Տակ	Դաս	Տեղ	Դէղ
Կէս	Եղ	Տաղ	Եղ
Տիկ	Աղ	Մաշ	Ուկ

2.

Դաշտ	Հաշտ	Օստող	ԱՄուկն
Կուշտ	Տաշտ	Սունկ	Դամակ

Հունդ	Կուղբ	Տունկ	Եկուղ
Կամն	Մնունդ	Զնդան	Նշան

3.

Կատու	Կաշի	Կաղին	Շուշա
Դանակ	Դաբաղ	Մեղու	Ուղիղ
Սամի	Հասակ	Կոտեմ	Համեմ
Անուշ	Աւազ	Շուշան	Նաւակ
Ուղիղ	Զաւակ	Աղեղ	Աղուն
Անուն	Անուշ	Զատիկ	Ողնի
Հաւատ	Աշոս	Մբակ	Սահակ
Ոսկի	Մուշեղ	Մբատ	Ղուկաս
Ոսկան	Ասեղ	Տաշեղ	Մողէս
Սամոն	Մոսէս	Շամամ	Տանեակ
Սահնակ	Սենեակ	Մանեակ	Տիկին
Աղուէս	Բամբակ	Կաղամբ	Բզգսն

4.

Շուշանիկ	Բաւական	Աւետիս
Անուշիկ	Բանական	Անբակում
Նշանակ	Ընտանի	Սիսական
Աւազակ	Ընտեղէն	Հաւարուն

Աւազան	Կոստանդին	Աւազաման
Ուղեղիկ	Ամասիա	Անուշաւան

5.

Շուն—չիկ	Ուղեղ—ուղեղիկ
Անուշ—անուշիկ	Մեղան—սեղանիկ
Շուշան—շուշանիկ	Տուն—տնակ
Աստղ—աստղիկ	Բուն—բնակ
Սան—սանիկ	Նաւ—նաւակ
Մուկ—մուկիկ	Աղաւնի—աղաւնեակ
Ոստ—ոստիկ	

6

Նուշ անուշ է:	Սիսակը ուտում է:
Կաղնին հաստ է:	Ամասիան տեսնում է:
Հունը հասնում է:	Սահնակը սահում է:
Մաղը մաղում է:	Մոսէսը կասում է:
Շուշանը բումնում է:	Անուշը մանում է:
Մողէսը սողում է:	Տունը ընկնում է:
Ղուկասը շինում է:	Զաւակս տանում է:

7

Կատուն կուտէ: Ամբատն եկաւ:

Սիմոնը կը տանէ:      Ոսկանը տեսաւ:  
 Մինասը կը տեսնէ:      Կաղնին ընկաւ:  
 Հոնը կը հասնէ:      Հունը հասաւ:  
 Տոնը կը շինուի:      Բամբակը բուսաւ:  
 Բամբակը կը բումնի:      Անուշը մտաւ:

8.

Կատուն ուտում է մուկը:  
 Հաւը տեսաւ կուտ:  
 Սմբատն ունի մատիտ:  
 Շունը կուտէ միս:  
 Շուշանիկն ունի շնիկ:  
 Անուշն ունի տիկին:  
 Սիսակը տեսաւ սահնակ:  
 Ղուկասը կասէ դասը:  
 Սամոնն ունի դանակ:  
 Ոսկանը տաշումէ մատիտը:  
 Բաղը ուտում է կուտ:  
 Կենդանին ստանում է սնունդ:  
 Մշակը կը տանէ աւագ:  
 Արմոնն ունի շամամ:  
 Զաւակս ունի շամամիկ:  
 Աշոտը կուտէ մոշ:

9.  
 Շուշանիկ. Մինաս. Կոստանդին. Անուշ.  
 Սիսակ. Ամբակ. Մուշեղ. Տիտոս. Ղուկաս.  
 Ոսկան. Խաչակ. Եղիկ. Բաղէշ. Դատ. Նշան.  
 Հաւանակ.

Շուն, Էշ, կատու, ուղտ, եղը, եղնիկ, մու-  
 կը, կէտ, կուղք . . .

Հաւ, բաղ, բու . . .

Մեղու. բգէզ . . .

Կաղամբ, համեմ, կոտեմ, շուշան, շաղկամ,  
 բամբակ. . .

Հող աղ, աւազ, ոսկի, սնդիկ, կաւ. . .

10.

Սմբատը կասում է, իսկ Ղուկասն ուտում է:  
 Անուշն ունէ մատիտ, իսկ Սամսոնը՝ դանակ:  
 Կատուն ուտում է մուկը, իսկ հաւը՝ կուտ:  
 Աղուէսը ընտանիկումէ դաշտում, իսկ շունը՝ տանը:  
 Կատուն ընտանի կենդանի է, իսկ եղնիկը...  
 Բամբակը բումնումէ դաշտում, իսկ կաղամբը...  
 Հաւն ընտանի է, իսկ բո՞ւն...  
 Շունն ուտում է միս, իսկ ուղտը...  
 Բաղն ուտում է հնդեղէն, իսկ կատո՞ւն...  
 Եղն ընտանի կենդանի է, իսկ աղո՞ւէսը...

Ք

Համ Ա մերսուսութ . սամ Ա բիմացան  
 սամեն Բ սամ Ա բազան Ա մասէն  
 մաշ Ա սամ է հրամ Ա միմ Բ խամաւ մաշն Ա  
 ամ բնիք պար արք տառապ է ման Ա  
 պար արք տառ արք է պար Ա  
 արք տառ պար Ա  
 պար արք Ա  
 նախաւ մական համար համար գերարդ  
 ամ բնիք պար ամ պար պար պար պար  
 ամ պար պար պար պար պար պար  
 պար պար պար պար պար պար պար  
 պար պար պար պար պար պար պար  
 պար պար պար պար պար պար պար

Հ եռուս մասն Բ ամ Հ եռուս զասն Ա  
 մասն Բ զասն Ա իսի ափան նմա մշան Ա  
 ամ իսի իսի պան Հ եռուս մասն Ա  
 զասն Բ զասն իսի հայուս ի եռուս զանը Ա  
 պար իսի Հ իմարմն իմասն մասավ Ա  
 զանը զասն իսի հայուս ի եռուս զանը Ա  
 մնայ իսի Հ իմասն մաս Ա  
 զարդ իսի սմի Հ եռուս մման Ա  
 մման իսի միմ Հ եռուս մրամ Ա  
 զանը իսի միմ Հ եռուս մրամ Ա

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՆՉԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՌԵՐԸ:

**Ց. Ծ. Գ. Վ. Զ. Խ. Օ. Զ.**  
**Թ. Ջ. Ծ. Ո. Պ. Ճ. Յ. Ք.**  
 յ (բազմավանկ բառերի վերջում). **Լ. իւ** (բառի  
 մէջը) այ (միավանկների վերջում և բառերի  
 մէջը) **Ժ. ոյ** (բառի միջում բաղաձայնից  
 առաջ). **Փ. Ֆ.**

ՅԱՅՈՒՅԻ ՎԱՐԴԱՐԱՅ ՎԱՐԴԱՐԱ

ՀՅ ՅՈ ԱԽ ՀՅ ՖԻ ԱՇ ԱՅ  
ՖԻ ԱՅ ՀՅ ԱՅ ԱՅ ՀՅ ՖԻ ԱՅ  
ԺԱԿ (Հայոցի վզման թափանքայ) և  
վզման և Նախոցի վզման թափանքայ) և (վշին  
վիմանարայ Նախոցի Հայոց) և ԱՅ (վշին  
ՖԻ ՖԻ ԱՅ ԱՅ

11.

Հաց	Կացին	Բարդի
Ցին	Կարկուտ	Հացին
Սուր	Ցերեկ	Մկրտած
Սար	Ցորեն	Ասեղ
Կիր	Կարմիր	Կերակուր
Ցաւ	Ցուցակ	Կարկատան
Շոր	Կարտ	Սրտուտիկ
Ցեց	Կորեկ	Արաբացի
Ցանկ	Դարբին	Դաշտեցի:
Սուրէնն	Ունէր կարմիր	մատիտ:
Ցորենն	Ունի բարտկ	արմատներ:
Կաղնին	Հաստ	բուն:
Աշակերտն	ստացաւ դեղին	մատիտ:
Աղ ու հաց	սիրտը բաց:	
Ուր որ հաց	էնուեղ կաց:	

12.

Գիր	Բագ	Գրիգոր
Գունդ	Գարի	Գարեգին
Սագ	Գարուն	Մանգաղ
Մարգ	Կարագ	Գաւազան
Միրդ	Դեղին	Սղցական
Հաւն	Ուտում է հատիկներ բագումը:	

Արտուտը երգում է իւր երգը դաշտումը:  
Դարբինը շինում էր կացին դարբնոցումը:  
Ես կարդում եմ դասա ուսումնարանումը:  
Գարին ու ցորենը բումնում են արտերումը:

Սագ . . .	Սագեր	Յորեն . . .	Յորեններ
Մարգ . . .	Մարգեր	Գարին . . .	Գարիններ
Նաւ . . .	Նաւեր	Մկրատ . . .	Մկրատներ
Նոր . . .		Կրակ . . .	Կրակներ
Բագ . . .		Կացին . . .	
Շոր . . .		Արտուտ . . .	
Ուզտ . . .		Գոմէշ . . .	
Մազ . . .		Գաւաղան . . .	

43

Կ ո վ	Վ անդակ	Վ երարկու
Սով	Վ արսակ	Վ արդենի
Վ արդ	Վ ահան	Վ նասակար
Վ ուշ	Վ ասակ	Վ արդան
Վ արդեր . . .	Վ արդ	Կացիններ . . .
Մ ը գ ե ր . . .	Մ ի ր դ	Մ անդակներ . . .
Հ ա ց ե ր . . .		Վ անդակներ . . .
Ո ւ զ տ ե ր . . .		Ա շ ա կ ե ր տ ն ե ր . . .

Սագեր . . .

Կովեր . . .

Գարեգինը և Վ արդանը գրում են իրանց  
դասերը: — Յորենը և գարին հասնում են ար-  
տերում: — Արտուտը և սարեակը երգում էին  
անուշիկ: — Գոմէշը և կովը ընտանի կենդա-  
նիներ են: — Բագրատը և Վ արդանուշը բա-  
րեսիրտ մանուկներ են: — Զարուհին և Տիգ-  
րանուհին շարունակ աշխատում են:

44.

Խաչ	Սեխ	Տախտակ
Խող	Խմոր	Մոխիր
Խոտ	Գրիչ	Գրչահատ
Սոխ	Խրատ	Ո չ խ ա ր
Խունկ	Խաշխաշ	Տետրակ
Խակ	Զամիչ	Գրչագիր
Շունչ	Խաղող	Խաչատուր

Դու վերցրիր իմ գրչահատը:  
Խաչատուրը վերցրեց Խորենի գրիչը:  
Վ արդանուշը գնաց իրանց տուն:  
Գու կը գնես հարեւանի հաւը:  
Աշակերտներն ունին շատ գրիչներ:

Ես ունիմ երկու մատիտ:  
Հովհան ունի հաղար ոչխար:

Ո՞վ է կարդում դասը . . . .  
Ո՞վ է կարդացնում . . . .  
Ո՞վ է զբում զբով . . . .  
Ո՞վ է կարում շորեր . . . .  
Ո՞վ է կարում տնամաններ . . . .

15.

Օ ձ	Չու՛կ	Ալոր	Խնձոր
Օր	Գանձ	Ալոտ	Գօտիկ
Չի	Տանձ	Չիաւոր	Կօշիկ
Չու	Մօտ	Չմերուկ	Դեղձանիկ
Չօր	Չագ	Խուրձ	Համբարձում

Օձը սողում է, նա ոտներ չունի:  
Դեղձանիկը երգում էր իր երգը:  
Եսօր ես գնացի ընկերիս մօտ:  
Նա իր դասը սովորում էր տանձենու տակ:  
Համբարձումը գնաց տանձ ու խնձորի:  
Գաշտումը վար էին անում արօրով:

\*  
Օձը սողում է, իսկ ձնէկը . . . .  
Զին արշաւում է, իսկ դեղձանիկը . . . .  
Գորտը ցատկում է, իսկ շնէնը . . . .  
Աշակերտը կարդում է, իսկ ուսուցիչը . . . .

Հայ ամ հարզը բնաշ է նախիման պալա

16.

Կ ա թ	Թ ո կ	Երկաթ
Թան	Թոռշ	Թոռթակ
Թաթ	Թողղ	Թագաւոր
Թութ	Թուղ	Թանկագին

Ոչխարից ու կովից կաթն են կթում:  
Մեր հարևանն ունի մէկ թոռթակ:

Թորոսը երեկ թուզն էր բերում:  
Թուզը համնում է աշնանը:  
Վահանը թութը շատ է սիրում:  
Թուզը կաթնի համ ունի: — Կաթնից շինում են եղ թան և ուրիշ բաներ:

Աղուէսն ուտում է միս, իսկ կատնւն . . . .  
Աշխատասէր աշակերտը կարդում է, իսկ  
կայնով կտրում են, իսկ սղոցնով . . . .  
Դանակով մորթում են, իսկ ասեղով . . . .  
Կաթը խմում են, իսկ հացը . . . .

17.

Չ ո ւ ր	Գ ա զ	Զ նդան
Ալջ	Չորի	Չրաբեր
Աջ	Չրչոր	Չրաղաց
Չան	Ականջ	Գարեջուր:

**Արջը** բնակվում է հանդերում, նա ու-  
տում է միս և ուրիշ բաներ: — **Մեր** եկեղե-  
ցում կան ջահեր: — **Զանիկը** գնեց երկու ջորի:  
**Զորին** շատ օգտակար կենդանի է: **Անջուր**  
տեղերում ոչինչ չէ բուսնում:

18

<b>Ծառ</b>	<b>Ծեծ</b>	<b>Արծիւ</b>
<b>Ծիծ</b>	<b>Ծունկ</b>	<b>Ծիծեռնակ</b>
<b>Ծուռ</b>	<b>Ծիրան</b>	<b>Սոխակ</b>
<b>Գառ</b>	<b>Ծարաւ</b>	<b>Առուակ</b>
<b>Կուրծ</b>	<b>Ածուխ</b>	<b>Առուտուր</b>

**Ծիծեռնակը**, արտուտը և սոխակը ձմե-  
ռը գնում են տաք երկիրներ: — **Արծիւը** գի-  
շատող թռչուն է, նա թրջում է շատ բարձր  
և իրան համար բուն է շինում մեծ մեծ ծա-  
ռերի կատարներին: — **Զմեռը** շատ թռչուններ  
հեռանում են մեր երկրից, իսկ գարնանը վե-  
րադառնում են մեզ մօտ:

19.

<b>Անպ</b>	<b>Պանիր</b>	<b>Ապակի</b>
<b>Կապ</b>	<b>Ապրուստ</b>	<b>Պետրոս</b>

**Պատ**      **Պարապ**      **Պանդոկ**  
**Պաս**      **Վոպիտ**      **Վարապ**  
**Պանիրը** շինում են կաթնից, նա օգտա-  
կար կերակուր է: — **Պետրոսը** կոտրեց իրանց  
հարևանի ապակիները, նա անկարգ տղա է:  
**Ծիտը** չէ գնում ուրիշ երկիրներ, նա ձմեռող  
թռչուն է: **Ծիծեռնակները** չեն մնում մեր եր-  
կրում, որովհետեւ տարագնաց թռչուններ են:

Ինչից են շինում չափչը . . .  
Ինչից են շինում ածուխը . . .  
Ինչից են շինում գրիչը . . .  
Ինչից են շինում մլրապը և դանակը . . .  
Որտեղ են բուսնում ցորենը և գարին . . .  
Որտեղ են բուսնում ձմեռուկը և սեխը . . .  
Որտեղ են բուսնում կոտեմը և համեմը . . .

20.

**Ճանճ**      **Ճաղ**      **Զութակ**  
**Ճար**      **Խեղճ**      **Ճախարակ**  
**Կարճ**      **Կարիճ**      **Զնդան** ՀԱՅՈՒՆԵՐԻ  
ԱԿՏՈՒԱՆՈՒՅՆԵՐԻ  
ՀՀՀ  
**Ճօճ**      **Ճակատ**      **Ճակնդեղ** ՀԱՅՈՒՆԵՐԻ  
ԱԿՏՈՒԱՆՈՒՅՆԵՐԻ  
ՀՀՀ  
**Մաճ**      **Ծամեր**      **Ճօճանակ**  
**Ճանճը**, մոծակը, բղէզը և թիթեռը մար-  
դուս ոչինչ օգուտ չեն հասցնում: **Ճանճերը**,  
Մայր. լեզ. ա. տ. Ն. Տ—Դ.

2



36288-66

մոծակները, բզէզները և թիթեռները ձմեռը  
սատկում են, աշնանը նրանց ձուերից նորերն  
են դուրս սողում: — Կարիճը շատ վտանգա-  
ւոր միջատ է, սև կարիճի կծածից շատ ան-  
գամ մարդս մեռնում է:

24.

**Տանձ** — տանձի — տանձենի:  
Խնձոր — խնձորի — խնձորենի:  
Կեռաս — կեռասի — կեռասենի:  
Թութ — թթի — թթենի:  
Նուշ — նշի — նշենի:  
Նուռն — նոռնի — նոռնենի:  
Թուզ — թզենի:  
Յ ո ւ ն ա պ — յ ո ւ ն ա պ ի:  
Սօսի, բարդի, հացի . . .

—

**Յարկ**, հարկ, յարդ, յարդ, հարթ, յամր,  
համր, յատակ, յետ, հետ, յամառ, համար,  
յիսուն, Յիսուս:

**Ծառը** իր պտղիցը կը ճանաչուի:  
Չար մարդից բարի բան մի՛ սպասիր:  
Կաղնի ծառը ապրում է շատ յիսուն տա-  
րիներ:



Համառ տղան չէ յարդվում ոչ մէկից:  
Մեր տան յատակը շինած է տախտակից:  
Զեր տան յատակը և յարկը ծածկած  
են տախտակով: Յիսուսը սիրում է բարի մա-  
նուկներին:

22.

<b>Բաշը</b>	<b>Քաղաք</b>	<b>Մատանիք</b>
<b>Փուրը</b>	<b>Քացախ</b>	<b>Արաղաղ</b>
<b>Փաթան</b>	<b>Քարտաշ</b>	<b>Աղաքար</b>
<b>Քանոն</b>	<b>Քամի</b>	<b>Որձաքար</b>
<b>Թամք</b>	<b>Սարք</b>	<b>Քարասիրտ</b>
<b>Գարեգինն իր ձիու համար գնեց գեղե- ցիկ թամք: — Զեր տունը շինած է քար ու կրից: — Պետրոսը քաղաքում գնեց քանոններ:</b>		
<b>— Արաղաղը գեղեցիկ թուչուն է. նա էնպէս է ձեմում, որ կասես բագի թագաւորն ինքնէ:</b>		
<b>Թունդ քացախը իր ամանը կը ճաքեց- նի: — Քարը իր տեղը ծանր կը մնա:</b>		

**Մեղը քաղցր է, իսկ քացախը . . .**  
Քացախը թթուէ, իսկ սուրճը . . .  
Հացը փափուկ է, իսկ քարը . . .  
Որձաքարը կալծր է, իսկ աւաղաքարը . . .

Դասական առարկաներ. գիրք, գրիչ  
նոն, մատիտ, տետրակ, գրատախտակ, քա-  
րետախտակ, քարեգրիչ, թանգարաման . . .

Ի՞նչ բան է՝ գնտակը, վէգը, պտուտակը  
բզզանը, տիկինը . . .

### Ա.Բ.Ա.Ա.Ղ.:

Դու ինձ ասա, աքաղաղ,  
Ոսկէ կատարիտ մատաղ,  
Կարմիր միրուքիդ մատաղ,  
Ինչի՞ ես շուտ արթնանում,  
Բարձր բարձր երգ ասում—  
Քաղցր քունա խանդարում:

### Դ.Ա.Ս.Ս.Ռ.Ի.Ն.:

Դասատանը նստած են մանուկներ, իսկ  
նրանց առաջը նստած է կամ կանգնած ու-  
սուցիչը:

Ուսուցիչը սովորեցնում է: Մանուկները  
սովորում են: Երբ մտնում է ուսուցիչը, ա-  
ռաջ ամենքը ոտի են կանգնում, աղօթում են,  
ապա նստում են և սովորում: Մանուկները  
դասատանը կամ կարդում են կամ գրում.  
Երբեմն նրանք նկարում են, շատ անգամ հաշ-  
ում են թուերով: Դասատանը դրած է մի

մեծ գրատախտակ, իսկ նրա մօտ կալիճ և  
սպունգ: Աշակերտների առաջ դրած են քա-  
րետախտակներ:

Ո՞վ է նստած դասատանը:  
Ի՞նչ է անում ուսուցիչը:  
Ի՞նչ են անում մանուկները:  
Ի՞նչ են սովորում նրանք:  
Ի՞նչ կայ դասատանը բացի գրատախտակից:

Առաջ ներ. Ով կը կարդա, նա մարդ ա:  
— Ով որ աշխատի, նա կուտի: — Իմացողին  
մին, չիմացողին հաղար: — Ով կը խաղա, նա  
կը կաղա:

### 23.

Կաթսայ, քահանայ, գաթայ, թաւայ, ե-  
րեկոյ, յետոյ:

Հայր, մայր, եղբայր, այծ, կայծ, հայ, վայ,  
էյ, թէյ:

Կերակուր, հաց, խորոված, սպաս, սա-  
ծուն, եղ, սեր, գաթայ, միս, պանիր . . .

Ինչ բան է՝ սուրճը, թէյը, գինին, գա-  
րեջուրը, կաթը . . .

Առաջ ներ. Աղ ու հաց, սիրտը բաց:—  
Հաց ու պանիր, կեր ու բանիր:— Ինչ տեղ  
հաց, էնտեղ կաց:— Ինչ տեղ գինի, էնտեղ

քնի:—Հացի կտրածը, թուրը չի կտրի:—Չուրն  
իր գնացած տեղովը կերթայ:—Կուշտը սո-  
վածին մանր կը բրդի:

### ԶՈԿ ԶՈԿ ԵՒ ՄԻԱՍԻՆ:

Վարդանիկն ու Սաթինիկն իրար հետ  
խաղում էին: Վարդանիկն իր բզզանն էր պլո-  
տացնում, իսկ Սաթինիկը տիկինով էր խա-  
ղում: Յետոյ Վարդանիկը բարկացաւ Սա-  
թինիկի վերայ. ինձ հետ մի' խաղար մի մօ-  
տենար իմ բզզանին—ասաց:—Իսկ դու ձեռք  
մի տար իմ տիկինին, պատասխանեց Սաթի-  
նիկը նեղացած:

Մանուկները յօնքերը կախած հեռացան  
միմեանցից և սկսեցին խաղը ջոկջոկ: Միայն  
վատն այն էր, որ մենակ սկսած խաղը շատ  
երկար չը քաշեց, և մեր մանուկները տիսուր  
տրտում վեր գցեցին թէ տիկինը և թէ բզզանը:

Ինչի՞ չը շարունակեցին մանուկներն իրանց  
խաղը:

Առարկաների թիւը. մէկ, երկու,  
երեք, չորս . . .

Առարկաների կարգը. առաջին, եր-  
կրորդ, երրորդ, չորրորդ . . .

ՆՍ.ՊԱ.ՍՏԱԿ: Կուտածես բազմութեան  
Ի՞նչ սիրուն ես, նա՛պաստակ, ուստի ըստ  
Քանի էղպէս պստիկ ես,  
Քեղ համար հաց կը բերեմ, զան նոր  
Շաքարեղէն կուտաշնեմ,  
Մինչեւ որ կը մեծանաս, մաս զմ' Ս  
Սիրուն կերպով պար կը գաս,  
Ծանր-ծանր կը շրջես,  
Եւ ինձ կուրախացնես.  
Ապա ես քեղ կարձակեմ, պայ չ ճանի  
Կերթաս ազատ կարածես:

### 24.

<b>Կալ.</b>	<b>Իլիկ.</b>	<b>Լապտեր</b>	<b>մեծութիւն.</b>
<b>Բալ.</b>	<b>ալիւր.</b>	<b>լեղակ.</b>	<b>ծուլութիւն.</b>
<b>Սալ.</b>	<b>արիւն.</b>	<b>հիւր.</b>	<b>բարութիւն.</b>
<b>Լուծ.</b>	<b>լուսին.</b>	<b>իւր</b>	<b>աշխատութիւն</b>

Գիւղացին ցորենը կալում է կալում:  
Աշխատասէր մարդու դրանը քաղցածու-  
թիւնը չի մօտենալ:  
Երեկ գիւղից հօրս մօտ հիւրեր էին եկել:

### ՏՈՒՆ:

Մեր տունը մեծ չէ, նա ունի երեք սե-  
նեակ և մի խոհանոց: Անեակներից մէկում  
ես եղբօրս հետ սովորում ենք մեր դասերը.

Երկրորդ սենեակում մենք ճաշում ենք. Են  
տեղ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սե-  
ղան և ուրիշ կարասիք: Ամենից մեծ սենեա-  
կում մենք քնում ենք. դա կոչվումէ ննջա-  
րան:

**Մեր** տան բագը շատ մեծ է. նրա աջ կող-  
մում պարտէզ է շինած. պարտէզի դիմացը  
կայ մի տախտակէ տնակ, ուր դրած են ա-  
մենատեսակ մանր բաներ. առաջին պատի մէջ  
շինած է բագի մեծ դուռը: Բագումը բնակ-  
վումէ մեր տան հաւատարիմը—շունը:

**Ի՞նչ** տեսակ տուն ունիք դուք:

Քանի՞ սենեակից է ձեր տունը:

**Ո՞ր** սենեակում ի՞նչ էք անում:

Ի՞նչ կայ դարսած սենեակներում:

Ի՞նչպիսի բագ ունի ձեր տունը:

Ի՞նչ կայ շինած բագի զանազան կողմերում:

Ի՞նչի՞ է հարկաւոր շունը:

**Գործիք.** արօր, գութան, մանդաղ, գե-  
րանդի, ցաքան, շղթայ, եղան, թիակ, կացին,  
էոսելի, դուր, մուրճ, բահ, աւիլ, մկրատ, ասեղ:

**Առածներ.** բզի գլխին բռնցքով տալ չի  
լինիլ:—Ուրաքն իր կոթը չի տաշիլ:

**Հանելուկ.** Օրան օրան շուռ է գալիս, ոտ-  
ներ շունի, ման է գալիս, բերան շունի կուլ  
է տալիս:

**Ինչով** ի՞նչ են անում:

Կացնով կտրում են, իսկ սղոցով . . . ի՞նչ են ա-  
նում ասեղով . . . դրշով . . . արօրով . . . ցաքա-  
նով . . . մանդաղով . . . շղթայով . . . սանրով . . .  
դանակով . . . կողպէքով . . . զգալով . . . դուրով  
. . . մուրճով . . . մկրատով . . . ասեղով . . .

**ԶԻՆ ԵՒ ԱՐՕՐԸ.**

**Երկրագործը** արօրով վարումէր դաշտը  
և գարի էր ցանում: Զին՝ յօնքերը կիտած,  
քաշում էր արօրը: **Վերջապէս՝ համբերու-**  
**թիւնը** հատնելով, նա դարձաւ և ասաց ա-  
րօրին. բարեկամ, դու քանի շատ ես աշխա-  
տում, էնքան աւելի ես սպիտակում և ուրախ  
ուրախ պսպրդում. իսկ ինձ բացի սև քրտին-  
քըն ու չարչարանքը ուրիշի՞նչ օգուտ է մնում  
—իզուր ես տրտնջում, ասաց նորան արօ-  
րը. մի՞թէ չես իմանում, որ ես իմ օգտի հա-  
մար չեմ աշխատում. ցանածի մեծ մասը քո  
ստամբան է մտնելու:

Հնձում են (ի՞նչով) . . . քանդում են . . .  
թեղը քամում են . . . սղցում են . . . գրում  
են . . . երկաթը ծեծում են . . . սրում են  
. . . կարում են . . . ձևում են . . . վա-  
րում են . . . սենեակները սրբում են . . .  
գրում են . . . տողում են . . .

25.

<b>Գայլ</b>	<b>Այգի</b>	<b>Փիղ</b>	<b>Փլաւ</b>
<b>Սայլ</b>	<b>Եղբայր</b>	<b>Փող</b>	<b>Փայտ</b>
<b>Հայր</b>	<b>Կայծ</b>	<b>Փոս</b>	<b>Փողոց</b>
<b>Այծ</b>	<b>Կայծաքար</b>	<b>Ափ</b>	<b>Խաչեղբայր</b>

**Գայլը** և շունը ցեղակից են, բայց բնու-  
թիւնով իրար նման չեն, շունը իր տիրոջ հա-  
մար է, հոգս քաշում, իսկ գայլը իր փորի  
համար:

**Այծը** արածում էր այգումը և կռծում  
էր ծառերի փափուկ ոստերը:

**Հայրը** սայլով փայտ էր տանում փողո-  
ցը ծախելու.—**Փայտը** ստացվումէ անտառ-  
նեղից:

**Ամաններ.** Գաւաթ, կաթսայ, թաւա, սինակ, հեշ-  
տաեռ, թեփշի, շեշ . . .

**Կարասիբ.** Սեղան, աթոռ, բաղկաթոռ, գահաւորակ,  
պահարան, նստարան, օրօրոց . . .

**Առաջներ.** խոփդ սուրա, հանդը փայանովի ահար  
Միաման ջուր, ով ուզի տուր:—Մինչեւ սայլը շուռ չի անցնի,  
ճամբէն չի դրսառել:

Մանգաղը գործիք է, իսկ գաւաթը ամանէ: Ի՞նչ բան է  
միսը . . . սուրձը . . . սղցը . . . սեղանը . . . եղանը  
. . . գինին . . . կաթսան . . . բաղկաթոռը . . . իլիկը . . .  
ճախարակը . . . գաթան . . . կաթը . . . գութանը . . .  
հայը . . . ջուրը . . . գրիչը . . . իւղը . . . բահը . . .  
աղը . . . մաղը . . . պանիրը . . . գահաւորակը . . .

### Բանջարանոց:

Բանջարանոցը շինում են սովորապէս տների մօտ.  
նորան շըջապատում են կամ ցանկով, կամ պատով:  
Բանջարանոցում մարգեր են շինում. իսկ մարգերում  
տնկում են կամ ցանում՝ կաղամբ. լորի, գազար, բողկ,  
սիներ, կոտեմ; վարունկ և ուրիշ կանաչեղին:

**Շոդ օրերը մարգերը ջրում են:**

**Որոնեղ** են շինում բանջարանոցները:  
Ի՞նչով են շըջապատում նորան:—  
Ի՞նչ աեղեր են պատրաստում ցանելու համար:  
Ի՞նչ են ցանում մարգերում:  
Ե՞րբ և ինչի՞ են ջրում մարգերը:—

\* \* \*

**Ոսուցիչը** ինչ է անում:—**Ոսուցիչը ուսուցանումէ:**  
Ի՞նչ է անում աշակերտը . . . քահանան . . . երկրա-

գործը . . . վաճառականը . . . հովելը . . . որարդը  
 . . . ձկնորսը . . . բրուտը . . . բարտաշը . . . կօշկակարը  
 . . . աշխատասէրը . . . անաշխատասէրը . . . ձին . . .  
 կովը . . . կատուն . . . մեղուն . . . շունը . . . կա-  
 րիճը . . .

### Խնդիր:

Մի խումբ սագեր էին թռչում: Նորանց հանդի-  
 պեցաւ մի ուրիշ խումբ: Առաջին խումբն ասաց երկրոր-  
 դին: Քանի հոգի էք, այ սագեր: Երկրորդ խումբը պա-  
 տասխանեց. Դուք չորս էք, իսկ եթէ մենք խառնուենք  
 հետներդ, տասը կրդառնանք:

Քանի սագ կար երկրորդ խմբում:

### Ո՞վ է ապրում և մեծանում, բացի մարդը:

Կովը ձին, ոչխարը, ուղարը արջը, աղուէսը, եղը,  
 առիւծը, վագրը, խլուրդը, նապաստակը, ողնին, զղիկը,  
 կրիան, օձը, գորարը բագրը հաւը, սագը, ծիծեռնակը,  
 սոխակը, գեղձանիկը, կաչաղակը, ագռաւը, անդղը, ցինը,  
 գեղարքունին, տառեխը, կապուտը, օրագուլը, ձանձը, մե-  
 ղուն, մոծակը, թիթեռը, բղեղը, սարդը, խեցգետինը . . .

### Ի՞նչն է աճում:

Խնձորենին, տանձենին, բալին, ուռին, սօսին, թղե-  
 նին, բրինձը, ցորենը, գարին, սոխը, կաղամբը, ձակնդեղը,  
 դղումը, համեմը, սամիթը, խաշխաշը, ուհանը, մանու-  
 շակը, մեխակը, . . .

Ի՞նչպէս են կոչվում այն առարկաները, որոնք ապա-  
 րում են և մեծանում:

Ի՞նչպէս են կոչվում այն առարկաները, որոնք աճում  
 են, բայց չեն ապրում:(\*)

### Երկու գիւղացի:

Գիւղացին մի սայլ խոտ էր տանում: Նորան պա-  
 տահեցաւ մի ուրիշ գիւղացի:  
 — Բարի աջողում:  
 «Աստուծու բարին:»  
 — Այդ ի՞նչ ես տանում:  
 «Փայտ:»

— Ի՞նչպէս թէ փայտ. չէ որ դա խոտ է:  
 «Եթէ տեսնում ես որ խոտ է, էլ ինչի՞ ես հար-  
 ցնում:»

Ինչ որ գիտես, նորա մասին էլ մի՛ հարցնիր:

\* \* \*

Գաղաններ. ձի, կով, շուն, կատու, գայլ, արջ, փիղ . . .  
 Թռչուններ. ծիծեռնակ, սոխակ, հաւ, արծիւ, սղ-

ութ . . .

Զիներ. կարմրախայտ, օրագուլ, տառեխ, կապուտ . . .

Սողուններ. օձ, մողէս, գորա . . .

Ուիշատներ. մեղու, ձանձ, մոծակ, մըջիւն . . .

\*) Ապրիլ բառը այստեղ գործ է դրած սահմանափակ  
 մաքուլ.

### Խողը և ձին:

Խողը մօտեցաւ ձիուն և ասաց նորան. ի՞նչ տգեղ  
կենդանի ես. ոտներ ունիս ծուռծուռ, իսկ մաղերդ կոշտ:

Ձին խէժխէժ նայեց խողին և ասաց. ի՞նչ կըլինէր,  
որ քեզ նման կեզտպատ կենդանինիրը ուրիշին դատելուց  
առաջ իրանց վերայ նայէին:

Ո՞վ եկաւ ձիու մօտ:  
Ի՞նչ ասաց խողը ձիուն:  
Ի՞նչ պէս ընդունեց ձին այդ խօսքիրը:  
Ի՞նչ պատասխան տուեց ձին:

Ձին ընտանի կենդանի է, իսկ օ՞ձը . . . Սօղէսը սու-  
ղուն է, իսկ մեղուն . . . նապաստակը . . . ծիտը . . .  
մորեխը . . . ողնին . . . գեղարբունին . . . էշը . . . թիւ-  
թեռը . . . օրագուլը . . . կովը . . . արտուտը . . .  
մըջիւնը . . . կրիան . . .

Առաջն եր, Շունը հաջելով կըսատիր—Շանհետ  
ընկերացիր, փայտը ձեռիցդ մի զցիր:—Գայլի անունն է  
կոտրած, աղուէսը աշխարհ քանդեց:—Գայլի զլսին ա-  
ւետարան էին կարդում, ասում էր. շուտ արեք, ոչխարը  
սարից անցկացաւ:—Կատուին խաղ է, մկանը մահ է:—Աղու-  
էսի դունչը խաղողին չը հասաւ, ասեց խակ է:

### Աղուէսն ու ճագարը:

Խորամանկ աղուէսը մօտեցաւ փոքրիկ ճագարի որ-  
ջին և ցած մտիկ տալով, ասաց նորան. «Ճագար, ի՞նչ ես

այդպիսի խոր փոսի մէջ պահուել, դուրս արի այդ մուժը  
ծակից, արածի՛ր պայծառ արևի տակ»

Շորհակալ եմ բարի խորհրդիկ համար. ես՝ կաշ-  
խառեմ կատարել նորան, երբ դու հեռացած կըլինիս  
այս տեղից. իսկ քանի որ դու այդ տեղ ես, կըմիամ  
իմ փոքրիկ որջի մէջ, որովհետև միտք չունիմ քեզպէսեւ-  
րի հետ բարեկամութիւն անելու:

### Պառաւն ու այծը:

(Ե Ր Դ)

Պառաւն մի այծ ունէր	Այծը կորցրեց:
Սասափիկ սիրուն այծ,	Ավանս, ավանս,
Որով նա ապրում էր՝	Այծը կորցրեց:
Աղքատ մնացած:	Նորանով գայլերը
Խղձուկ, մենակ,	Կերակրուեցին,
Աղքատ մնացած,	Եւ խղձուկ պառաւին
Մի օր իւր այծիկը	Պողերը թողին:
Նա հանդը տարաւ,	Միայն, միայն
Եւ գարնան խոտումը	Պողերը թողին:
Արածացըրաւ:	Պառաւը նստած էր
Կուշտ-կուշտ, կուշտ-կուշտ	Փունջ խոտը ձեռին,
Արածացըրաւ:	Անմիտիթար ձայնով
Մարտի վեցերումն էր,	Կանչում էր այծին.
Խիստ քամի փէց,	Ե՛կ, Եկ-Եկ, Եկ.
Պառաւի աչքիցը	Կանաչում էր այծին:

26

Ճամ	Բաժակ	Ամիս	Առժանի
Կուժ	Բաժին	Շաբաթ	Բժիշկ

**Ժամդ Աժան Տարի Վարժարան  
Ժողով Օր Ժամանակ Վարժապետ**

Առաւօտը ևս շուտ վեր եմ կենում և գնում եմ վարժարան: — Ուժ ժամին դասերն սկսվում են: — Երեկուները ևս պարաստում եմ միւս օրուան դասերս: — Վարժապետը դովում է աշխատասէր աշակերտներին:

Շաբաթուայ օրերը. կիւրակի, երկուշաբթի . . .  
Տարուայ եղանակները. դարուն . . .

Առաջներ. Խսօրուայ բանը էզուց մի գցի՞ր: — Խսօրուայ փուշը, էզուցվայ նուշը: — Վեց օր գործի՞ր, եօթնեւրորդ օրը հանգատացիր:

Հանելուկ. Ե՞րբ է լինում, որ տարին միայն երկու օր է ունենում:

### Խնդիր:

Գնում էին վեց տղայ, որոնք ունէին տասը տանձ: Նորանց մօտից անցնում էին երկու տղայ և տանում էին երկու երկու տանձ: Դորանց պատահեցան էլի վեց տղայ և սկսեցին բոլոր տանձերը մէջները հաւասար բաժանել: Քանի տանձ ստացաւ իւրաքանչեւր տղան:

### Ե՞րբ է լինում:

Զիւնը հալվում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում: Այս ե՞րբ է լինում:

Ամիսներն անցան. օրերն տաքացան: Ամպեր բարձրացան, անձրև թափեցին: Արտերն հասել են, հնձող են կանչում: Այս ե՞րբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կար-

Ճաշաւ, հունձը վերջացաւ: Բարակ անձրել բարձրից է թափլում, իսկ մուժ գիշերը ըրս կողմդ բռնում: — Այս ե՞րբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան. Ծառեւրից սառցէ շիթեր կախուեցան Մարդիկներս մոան իրանց տները, իսկ գաղանները — իրանց բները: Դուրսը սասակութեամբ քամի է փշում և ձիւնի փոշիով աչքերդ լցնում: — Ասացէք տեսնեմ, այս ե՞րբ է լինում:

### Առաւօտ:

Փայլուն ճաճանչով արևելք ծածկուեցաւ.  
Գետի մօտ գիւղում կրակը հանդաւ.  
Դաշտի ծաղիկներն ցողով ծածկուեցան.  
Տաւար ու ոչսար արօտ դուրս եկան:  
Թանձը մեղերը երկրից հեռացան.  
Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.  
Մարդիկ զարթեցան, դործը ձեռք առան.  
Արևելք ելաւ, աշխարհ բերկեցաւ:

### 27

Բոյս. Բոյն. Քոյր. Յոյս. Գոյն. Արտոյտ. Թոյն. Լոյս.  
Հայարոյս:

Միւնոյն ծաղկից մեղսն մեղը է շինում, իսկ օձը թոյն: — Բոյր ու եղբայր խաղում էին միմեանց հետ: Արտոյտը իւր բունը խոտերի մէջ է շինում:

### Երկու աքաղաղ:

Երկու աքաղաղ կռուեղին և մինը յաղթեց միւսին:  
Մայր. լեղ. ա. տ. ն. 8—Պ.

Յաղթուողը փախաւ մնաւ սրահի տակ, իսկ յաղթողը  
բարձրացաւ կտուրը և բարձր ձայնով կանչեց. ծուղ—րուշ  
զն: Յանկարծ արծիւը, որ այդ ժամանակ թռչում էր  
վերևից, տեսաւ հպարտացող աքաղաղին, յափշտակեց նու-  
րան և տարաւ, անուշ արաւ:

\* \*

Պառեր. Հացի, լորենի, կաղնի, խնձորենի . . .  
Թափեր. Մորենի, վարդենի, մոշի, հաղարձի . . .  
Խոտեր. Անանուխ, եղինջ, թրթնջուկ . . .  
Բանջարանոցի բոյսեր. Սիսեռ, լորի, բողկ . . .  
Հացարոյսեր. Ցորեն, դարի, կորիկ, բրինձ . . .  
Առածներ. Ծառն իր արմատից կը ջրանայ:—Պաղա-  
տու ծառը գլուխը կախ կը պահի:—Այ ծաղկով գարունք-  
չի լինիլ:—

### Ցորեն և գարի:

Գարին ցորենին ասաց. «Ցորեն եղբայր, արի՝ գնանք  
այնտեղ, ուր ոսկի է դուրս գալիս. այնտեղ մենք կարող  
ենք աղատ մանդալ:»

Ցորենը գարուն պատասխանեց. «Ընկեր, ինչպէս  
տեմնում եմ՝ քիստդ երկար է, իսկ խելքդ կարճ. ի՞նչ  
հարկաւորութիւն ունինք քաշ գալու ոսկու յետեից.  
Նա ինքը մեզ մօտ կը գայ:»

\* \*

Խնձորենին ծառ է, իսկ վարդենին թռւփ է: Անա-  
նուխը խոտ է, իսկ սիսեռը . . . ցորենը . . . կարտու-

փիլը . . . կաղնին . . . մորենին . . . լորին . . . գա-  
խն . . . ընկուզենին . . . ձակնդեղը . . . սամիթը  
. . . բրինձը . . . կաղամը . . . բալին . . . մոշին...  
առույյաը . . . գաղարը . . . թրթնջուկը . . . կոտե-  
մը . . . կորեկը . . . վարունդը . . .

### Հանելուկ:

Գարնանը դաշտումը տեսայ մի ծաղիկ,  
կանաչ տերե ունէր և կապոյտ աչիկ.  
Խոտերի մէջ հազիւ նա տեմնվում էր.  
Թէև համեստ ծաղկած՝ սիրուն հոտ ունէր:

### Գիւղաջին

(Մանկական խաղ\*)

Գիւղացին ո՞նց է անում,	Գիւղացին ո՞նց է անում:
Իր արտումը բանելիս,	Ահա այսպէս անում է,
Արիւն քրաինք թափելիս,	Երբ ցորենը հնձում է:
Երբ որ ցորեն է ցանում—	լս, լս, լս և այլն:
Գիւղացին ո՞նց է անում:	Գիւղացին ո՞նց է անում:
Ահա այսպէս անում է,	Երբ անհամար հասկերը
Երբ ցորենը ցանում է.	Ծածկում են իր արտերը,
լս, լս, լս, (4 անգամ):	Եւ իր ցորենն է կրում—
Գիւղացին ո՞նց է անում,	Գիւղացին ո՞նց է անում:
Իր արտումը բանելիս,	Ահա այսպէս անում է,
Սիրուն ցորենն հնձելիս,	Երբ ցորենը կրում է:
Աշխատելով՝ անդադրում:	լս, լս, լս և այլն:

\*) Այս խաղերի մասին տես բացադրութեան գրքում:

Գիւղացին ո՞նց է անում: Գիւղացին ո՞նց է քնում:  
Արտիցը յետ գաւնալով Այսպէս քնում է խաղալ,  
Ամբարը լի ցորենով, Սիրտը հանդիստ և ուրախ  
Երբ իր ցորենն է կալսում: լա, լա, լա . . . . .

Գիւղացին ո՞նց է անում: Ապա անհոգ գիւղացին,  
Ահա այսպէս անում է, Յետ ծանր աշխատանքին,  
Երբ ցորենը կալսում է: Նոր ոյժ նոր սիրտ է առնում,  
Լա, լա, լա, . . . . : Զբոսնում է ու երգում:

Գիւղացին ո՞նց է անում: լա, լա, լա և այն:  
Իր խրճիթը յետ գտիս,  
Պարզ անկողին մանելիս,  
Բուք քամուց անհոգ լինում:

### Խնդիր առակածե:

Գիւղացին սայլով խոտ էր տանում սայլումը կային  
նմանապէս մի գայլ և մի գառը: Նա հասաւ գետի եւ  
զերքը, և երբ կամենում էր կարմուրջից անցկենալ, պաւ  
հապանը առաջը կարեց և ասաց. Եթէ ուզում ես, որ  
թողնեմ կամուրջից անց կենաս առանց վարձի, պէտքէ  
կատարես մի պայման. աշխատիր անցկացնել քո ապա  
րանքու ջոկ՝ ջոկ՝ գայլը գառը և խոտը, միայն այնպէս, որ  
միմեանց վնաս չը հասցնեն:

Ի՞նչ անէր գիւղացին. Եթէ առաջ գայլը տանէր,  
գառը կուտէր խոտը. Եթէ խոտը տանէր, գայլը կըպաշ  
տռուտէր գառանը. Եթէ գառը տանէր, գայլը խոտը չէր  
ուտիլ, բայց յետոյ գառան մօտ եթէ գայլը բերէր ու  
թողնէր, իսկ ինքը գնար խոտի յետելից, գայլը կուտէր  
գառանը. իսկ եթէ խոտը բերէր ու թողնէր, իսկ ինքը  
գայլը յետելից գնար, գառը կուտէր խոտը: Մտածեց մուա-

ծեց մեր գիւղացին և իւր ապրանքն այնպէս հնարքով  
անցկացրեց, որ մէկը միւսին ամենենին վնաս չը տուին:—  
Ի՞նչպէս անցկացրեց գիւղացին իւր ապրանքը, իմացէք:

Մարդի մարմնի անդամները. Գլուխ, պարանոց, բուն,  
ձեռներ, ոտներ:

Գլխի մասերը. գագաթ, ծոծրակ, քունքեր, ձակատ,  
զէմք:

Դէմքի մասերը. յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան,  
կզակ:

### Համբերութիւնը կեանք է:

Աքաղաղն ու հաւը եղբայրացան: Աքաղաղը գնաց  
այզին և սկսեց ուտել խակ պտուղներ. իսկ հաւն առ  
ուում էր նորան. մի՛ ուտիր, եղբայր, սպասիր մինչեւ հաս  
նկը: Աքաղաղը հաւին չըլսեց. նա այնքան կերաւ, որ հաւ  
թեւ կարողացաւ տուն համել:

—Վայ, քուրիկ, փորս ցաւում է, ասում էր աքա  
զաղը: — Հաւը նորան անանուխի կաթիներ խմացրեց.  
շաղախած մանանեխ կպցրեց և ցաւն անցկացաւ:

Աքաղաղն առողջացաւ և գնաց զաշտը: Այնտեղ  
նա շատ թռչոտաց ու վազվազեց և բոլորովին քրտնած,  
մօտեցաւ աղբիւրին և ուզում էր սառը ջուր խմել:  
Հաւը խրատում էր նորան. մի՛ անիր, եղբայր, ասում էր.  
սպասիր, քիչ հանգստացիր, յետոյ կը խմես: Աքաղաղն  
ականջ չարեց նորան. սառը ջուրը խմեց և սկսեց դու-  
զացնել: Մեծ դժուարութեամբ կարողացան տուն հաս  
ցնել նորան: Հաւը վազեց բժիշկ բերելու: Բժիշկը եկաւ.

և նորա համար դառը գեղ գրեց: Աքաղաղը երկար  
ժամանակ պարկած էր անկողնումը:

Զմեսնադէմ աքաղաղն առողջացաւ և զնաց գետի  
ավը խաղալու: Գետը ծածկուած էր բարակ սառուցով:  
Նա կամեցաւ սղալ սառուցի վերայ: Հաւը խրատում էր  
նորան. Մի անիր, եղայր, գեռ սառուցը բարակ է. կը կոտ-  
րուի և կը խեղտուիս: Բայց աքաղաղը չը լսեց նորան և  
սկսեց տղալ: Յանկարծ սառուցը կոտրուեցաւ և մեր ան-  
հնագանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղտուեցաւ:

**Առածներ.** Աստուած ձեռք է տուել բան շինելու  
համար:—Հայն ուտելով բանն, անելով:—Բանի անունը  
տալիս, զիփի ցաւը բռնում է:—Ծոյլ մարդու ձեռները  
միշտ փլաւ են ուտում:—Մարմնի ճրագն աչքն է:

Գլուխը մորմնի մասն է, իսկ դէմքը . . . օչքը դէմ-  
քի մասն է, իսկ ծոծրակը . . . բերանը . . . զադաթը  
. . . ձեռները . . . կղակը . . . սաները . . . քուն-  
քերը . . . զլուխը . . . յօնքերը . . . բունը . . .  
ի՞նչ մասեր ունի շան մարմինը: —պատմեցէ:

ի՞նչ մասեր ունի հաւի մարմինը:—Մեղուինը:

### Թռչնակ:

Ար տան դիմայ, ծառի վերայ  
ձնձղուկը մեծ հոգսի մէջ է.  
Նա կտուցով խոտ է կրում,  
Մաղ ու ծղօտ, բուրդ հաւաքում—  
իւր ձագերին տաք բուն շինում:

Արեգակը երբ զուրս եկաւ,  
ձնձղուկն իրան գործն սկսեց.  
Մինչեւ արեն մայր մանելը

Ե՛ւ գործ տեսաւ նա, և՝ երդեց:  
Երբ որ գիշերը մօտեցաւ,  
Սիրուն թուշունը սուս կացաւ,  
Եւ զլուխը թեկրի տակ  
Մինչեւ իլոյսը քննեցաւ:

Հինց լուսացաւ, ծէզը բացուեց,  
Սիրուն ձնձղուկը նորից զարթեց,  
Անուշ ձայնով, քաղցր կերպով  
իւր երդի տուտը սկսեց:

### Աղուէն ու կճուճը:

Պառաւը գուրս գնաց զաշտը հունձ անելու: Ճաշի  
համար նա վերցրել էր մի կճուճ կաթը, որը պահեց մի  
թփի տակ: Աղուէն այս բանի հոտն առաւ, մօտ եկաւ,  
զլուխը կոխեց կճուճի մէջ և կաթը լակեց. յետոյ կաս-  
մեցաւ յետ դառնայ, բայց ցաւն այն էր, որ զլուխը  
կճուճից չէր կարողանում հանել: Ոչ, այ կճուճ, կաս-  
տակը մի կողմը մնայ, բայց թող զլուխս, ես քո խաղա-  
ծաղիկը չեմ: ասում էր աղուէնը զլուխը թափահարելով:  
Բայց կճուճն ամենեին նորան չէր լսում: Աղուէնը բար-  
կացաւ: “Սպասիր, անիծած, քո կամքով չես թողնում,  
տես հիմա ես ինչպէս կը խրատեմ քեզ:” Ասաց ու գնաց  
գետը, որ խեղակ նորան, բայց երբ զլուխը ջրի տակը կոռ-  
խեց, կճուճը ջրով լքցուեցաւ և մեր գող աղուէնն էլ  
ջրի տակը իւր արժանի պատիժն ստացաւ:

\*\*

Ձեռների մասերը. դաստակ, արմունկ, ուս:

Ոտների մասերը. ազդը, սրունք, դարշապար:  
Բնի մասերը. կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

\* \* \*

Դաստակը ձեռքի մասն է, իսկ ազդը . . .  
Կուրծքը բնի մասն է, իսկ բո՞նը . . .  
Սրունքը ստի մասն է, իսկ թիկունքը . . .  
Գարշապարը ձեռքի մասն է, իսկ ձեռքը . . .

### Երկու հովիւ:

Երկու հովիւ, Պետրոսը և Յովհաննէսը; դաշտից  
միասին տուն էին դառնում:—Գիտես, Պետրոս, ասաց ընա  
կերը, եթէ քո ունեցած ոչխարներից մէկը ինձ տաս, իմ  
հօտը քոնից երեք անդամ շատ կը լինի:—ԱՌ, ասաց  
Պետրոսը. աւելի լաւ է զու քո ոչխարներից մէկը ինձ  
տուր, այն ժամանակ մենք հաւասար կունենանք:  
Մանուկներից ամեն մէկը քանի ոչխար ունէր:

### Ուշերն ու գայլը:

Լինում է—չէ լինում մի այծ: Այս այծը իւր հաս  
մար անտառումը մի տուն է շինում և իւր փոքրիկ ուշ  
լերով բնակվում է նորա մէջ: Ամենայն օր նա դուրս է  
գնում արածելու, միայն գնալուց առաջ պատուիրում է  
իւր ձագերին, որ ոչքի համար դուռը բաց չանեն. ինքն  
էլ, հանդումը կանաչ խոտերի մէջ արածելուց յետոյ,  
երեկոյեան յետ է դառնում տուն և իւր երկար կեռ պու  
զերով դռանը խփում ու առում.

Ի՞մ ուլիկներ, փոքր այծուկներ,  
Դէհ շարժուեցէք, դուռը բայեք,  
Ես դալիս եմ կանաչ դաշտից,  
Աբրեշումէ խոան արածած,  
Սառն աղբիւրի ջուրը խմած,  
Կուրծս լիքը ես ձեզ համար  
կաթն եմ բերում իմ ծծերում.  
Բայեք, բայեք, ձեզ եմ ասում:

Ուշերը՝ լսելով իրանց մօր ձայնը, վազում են ու  
բաց անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նորանց և կըր-  
կն գնում է արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը և մոքումը  
գնում է խարեւթեամբ ներս մտնել ուկերի բնակարանն  
ու նորանց ուտել: Մի օր, երբ այծը դուրս է գնում ա-  
րածելու, գայլը մօտենում է այծի փարախին և սկսում է  
երգել, միայն թէ հաստ ու կոպիտ ձայնով.

Ի՞մ ուլիկներ, փոքր այծուկներ,  
Դէհ շարժուեցէք, դուռը բայեք.  
Զեր մայրն եկաւ, կաթը բերաւ . . .”

Ուշերը մի փոքր ականջ են գնում և իմանալով որ  
իրանց մայրը չէ երգող, ասում են. “Լսում ենք, լսում,  
ոյդ մեր մօր ձայնը չէ. մեր մայրը բարակ ձայնով ու  
քաղցր է մկում:” Ասում են ու դուռը չեն բացանում:  
Գայլը, սովածութիւնից ատամները կրծացնելով, թող-  
նում է ու գնում: Մի փոքր ժամանակից յետոյ դալիս է  
և մայրը. նա գովում է իւր ձագերին, որ իւր խօսքը լսել  
են և դուռը չեն բաց արել: Դուք շատ լաւ էք արել,  
մըղիք, որ դուռը չեք բաց արել, թէ չէ նա ձեզ ամենիդ  
էլ կուտէր:

**ՄԱՍՆԵՐ**  
(Մանկական խաղ)

Ես իմ բոլոր մատներս երբ որ հաշվում եմ, հինգ է լինում, ասաց Վարդանը; ԿԱՆԿԱՐԵԼ է, ասաց Հայկանուշը, Ի՞նչպէս կարող ես այնպէս համարել, որ քո տասը մատը հինգ դառնայ: — Կարող եմ, պատասխանեց Վարդանը, և սկսեց համարել, ցոյց տալով իւր մատների վերայ. մի մատը, երկու մատը — երեք, սորանից յետոյ չ'ըս մատը — հինգ:

Հայկանուշը զարմացած նայում էր իւր եղօր վերայ և կարծես ոչինչ չէր հասկանում, մինչեւ որ նա չըկրինց միևնուն բանը միքանի անդամ:

\* \* \*

Գիրքը դասական տռարկայ է, իսկ ջուրը . . . Գընա դակը խաղալիք է, իսկ սեղանը . . . Կայինը դործիք է, իսկ խորովածը . . . Կոփը ընտանի կենդանի է, իսկ եղնիկը . . . Նապաստակը վայրենի գաղան է, իսկ կատուն . . . Թրթնջուկը խոտ է, իսկ վարդենին . . . Խնձորենին ծառ է, իսկ օձը . . . Գորտը սողուն է, իսկ մոծակը . . . Երկաթը հանք է, իսկ ծառը . . .

ԴԱՌԵ ԻՒ ԻՒՐ ՄԱՅՐԵ:

(Մանկական երգ:)

— Ի՞նչի՞ կուլաս դուն, դանոնիկ: Կիսու ծեծ կերայ ես, մայրիկ:\*

— Քեզ ով ծեծեց, իմ դառնիկ: ԿՄէկ կախարդ պառաւ կնիկ: Ինչի՞ ծեծեց քեզ, դառնիկ: Ծառի տակն էի, մայրիկ: Ինչով ծեծեց քեզ, դառնիկ: ԿՄէկ մեծ փայտով, իմ մայրիկ: Որտեղիդ զարկեց քեզ, դառնիկ: Ուտիկներիս, իմ մայրիկ: Ինչպէս լացիր դռն, դառնիկ: ԿՄէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ: **Փոքրիկ որբը:** Փայլուն արեւ արդէն մայր մտաւ, Կուսինն էլ վաղուց դնաց, թագկացաւ: Փոքրիկ աստղերը ամգում ծածկուեցան, Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան: Ամեն մարդ դնաց իւր տունը հասաւ, Ամեն երեխայ մօր զիրկը մտաւ. Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր, Չունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղայր: Անտէր մնացած, Աստուծոյ կալքին, Խեղճը քնած է փողոցի միջին:

**Գայլը, արջը և աղուէսը:**

Գայլը, արջը և աղուէսը հպարտ հպարտ խօսում էին միմեանց հետ: Գայլն ասում էր. որ խմանաք, ընկերներ, թէ ես մինչեւ հիմայ քանի՛ քանի՛ ոչխարներ եմ քաշուուել հօտիցը: Հէսց որ հովիսը միամովում է, ես

թփերի տակից ծածուկ մօտենում եմ հօտին և մի գառը կամ ոչխար դրկում եմ ու փախչում: Շներն սկսում են ոռնալ, հաջել, հովել վազում է մահակն ուսին, բուլը շներն յետելից են ընկնում, բայց որտեղ. ես արդէն հեռու անտառում իմ որսն անուշ եմ անում:

— Ախարներն ինչ բաներ են, ասաց արջը. ես գոմերն եմ քանդում և այնտեղից եզներ եմ զուրս քաշում:»

Աղուէսն ասաց. ոչ' հ, պարոններ, դուք ամեն բան ուժով էք անում. բայց տեսէք թէ ես ո'րպիսի խորամանկութեամբ մտնում եմ հաւանոցը, թառը գտնում եմ և լուռ ու մունջ՝ հաւերի պարանոցն այնպէս եմ ծալում, որ մի ձայն էլ չեն կարողանում հանել. յետոյ երբ դուրս եմ գալիս, հետքս այնպէս եմ մոլորեցնում, որ սատանան էլ չի գտնիլ: Ե' հ, էլ ինչ երկարացնեմ: ինձ բոլոր հաւերը շատ լաւ են ճանաչում:»

Ագուաւը, որ ծառի վերայ նստած լսում էր սորանց խօսակցութիւնը, ասաց. «Հա, հա, բայց այն էլ ձշմարիտ է, որ շուտով ամենքիդ կաշին էլ կը քերթեն:»

Աչքի մասերը. բիր, ծիածան, սպիտակոց, կուպեր, արտեանունք:

Բերանի մասերը. շրթունքներ, ծնօտներ, լընգեր, ատամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող:

Պատահի մասերը. մասներ, ափ, մատնաբառներ:

Գարշապարի մասերը. պատուանդան, կրունկ, մատներ, ճիտք:

Առածներ. Արմնու ճրադն աչքն է:— Լեզուդ չուանի դիր:— Լեզուի տակին ոսկոր չկայ, որ սուտ ասելիս ծակի:— Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչոք չհաւա-

տաց:— Օձի կծածը կըսաղանայ, լիզուի կծածը չի սաւ դանալ:

Հանելու կներ. 1. Փոքրիկ պատուհան, շեղջով լիքը:— 2. Երկու օթախ մի սիւնանի: 3. Մէկ տըմբ տըմբիկ, երակու խլզչիկ, երկու պլզչիկ, մէկ հոսոտիկ, էն ի՞նչն է: 4. Սի ձմերուկ օխտը ծականի:

Արագախ օսութիւն. Փոկակապ Յակոբ ապեր, թէ կարաս մի փոկ կապես, ես քեզ կասեմ՝ շնորքդ շատ, փոկակապ Յակոբ ապեր:

### Ծոյլը և ջանասէրը:

— Այսօր խաղամ, վաղը կը սովորեմ, ասում է ծոյլը:

— Վաղը կը խաղամ, այսօր սովորեմ, ասում է ջանասէրը:

Ծոյլ աղջեկը. «Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է. բամբակը կորըզոտ է, մետաքս պիտի, որ մանեմ, մաստակ պիտի, որ ծամեմ, կտերը տիտիկ անեմ, անցողին մտիկ անես, ուտեմ, խմեմ, մլնի, քնեմ:»

Ծոյլ աղջան. Շորերս հաներ, թէկդցիր, ծածկիր ինձ, խաչակնքիր ինձ վերայ, յետոյ ես ինքս կը քնեմ:»

\* \*

Աչքը դէմքի մասն է, իսկ բիրը . . . Ափը ձեռքի մասնէ, իսկ դէմքը . . . Գարշապարը ոտի մասն է, իսկ պատուանդանը . . Դէմքը զլսի մասն է, իսկ զլուխը . . . Ծիածանը աչքի մասն է, իսկ աչքը . . . Ատամները . . . Կրունկը . . . ոտները . . . ազգը . . . Պատահը կը . . . ծնօտները . . . Կոծոխիրին թուփ է, իսկ կաղնին . . .

կուժը աման է, իսկ փլաւը . . . 0ձը սողուն է, իսկ մհարեխը . . . ձին . . . վաղը . . . մածունը . . . արօրը . . . բազկաթոռը . . .

### Մէկ և երկու:

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու: Ինչի՞: Ինքդ հասկացի՛ր, աւելի լսի՛ր և սակաւ խօսի՛ր:

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու: Ինչի՞: Երկուս սով նայիր, երկու մտածի՛ր, մէկ սպատասխանի՛ր:

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու: Ինչի՞: Ինքդ հասկացի՛ր. երկուսով գործի՛ր, մէկով վայելի՛ր:

### Մ ա յ ի ս:

Մենք արժանացանք ուրախ մայիսին,  
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.

Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը  
Ուրախ ու զուարժ առաջ վազեցին:

Տերեշատ ծառի ստուերների տակ  
Թռչուններն իրանց երգերն են երգում.  
Կանաչ դաշտերի փափուկ մարդերում  
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

\* \*

Տարուայ ո՞ր եղանակն է նկարադրվում այստեղ:  
Ի՞նչ ամսի արժանացանք:  
Ի՞նչով է ուրախացնում մեզ մայիսը:  
Ի՞նչ է պատահում ծառերին և ծաղիկներին:  
Ի՞նչ է տեսնվում երկնքում:

Ի՞նչ է լսվում ծառերի ստուերներում:  
Ի՞նչ է տեսնվում կանաչ մարդագետիններում:  
Ուրեմն որո՞նք են դարնան նշանները:

### Ո Զ Խ Ա Ռ Ո:

Աստուած տաքացնում է ոչխարին:

Գարնան վերջերում հովեւը խուզեց իւր ոչխարները:  
Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին ամբողջ մարմնով:

Աստուած խղճաց ոչխարների վերայ և աշխարհ ուղարկեց  
արևի տաք ճառագայթները և ջերմ քամին: Ոչխարները  
տաքացան և ուրախ ուրախ վազեցին գէպի դաշտը. իսկ  
աշունքագէմ նորանց բուրդը նորից դուրս եկաւ:

Ի՞նչ շինեցին ոչխարի բրդից:

Մանուկներն ամբողջ ամառ ուրախ ուրախ խաղում  
էին: Չմեռն եկաւ և նորանք չկարողացան առաջուայ պէս  
շուտ շուտ դուրս վազել: Տխուր նստուած էին նորանք  
լուսամնաների առաջ և նայում էին գէպի դուրս, ուր  
ձիւնը քուլայ—քուլայ էր անում: Մայրը գնեց ոչխարի  
բուրդ, թել մանեց և փափուկ դուլցաներ ու թաթմաններ  
գործեց իւր որդոց համար. յետոյ նա շալ գործեց և նուրանց համար շորեր կարեց: Այնուշեան. մանուկները՝ տաք  
հազնուած լինելով, համարձակ դուրս վազեցին և ուրախ  
ուրախ սկսեցին ձնագունտի խաղալ:

\* \* \*

Գրում են դըռով . . . կարում են . . . կարդում

Են . . . վարում են . . . ուտում են . . . ման են դաշիս . . . կալում են . . . Արօրով վարում են, իսկ մատիտով . . . Հայը ուտում են, իսկ կտթը . . . Անդանը շինում են փայտից, իսկ տունը . . . Հայը թխում են ալիւրից, իսկ դինին քամում են . . .

### Չորս ցանկութիւն:

I. Չմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինն իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ սառուցի վերայ սղղանով: Բաւական խաղալուց յետոյ նա ուրախ ուրախ տուն վազեց և ասաց իւր հօրը. «Ա՛խ, հայրիկ, ի՞նչ պատուական եղանակ է ձմեռը, որքան ուրախութիւններ ենք անում մենք. ձնագունափ ենք խաղում, սղղում ենք սառուցի վերայ, սահնակներով ղբօսանում ենք . . . Ա՛խ, ի՞նչ կը լիներ՝ որ միշտ ձմեռ լինէր: Հայրը հանեց ծոյի տեարակը և ասաց. «Գրիր սորամէջ քո ցանկութիւնը:» Գարեգինը զրեց:

II. Չմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բայցուեցան ծառերի ծաղիները. բարձրացան գաշտերի խոտերը. ամենայն տեղ ոսառսում էին հազարաւոր թիթեռներ և բգէզներ: Գարեգինը զուրս գնաց դաշտը, ծաղիներ քաշեց, թիթեռներ բռնեց, իսկ երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր: Ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը, և եթէ ինձ մնար, ես կը ցանկանայի, որ միշտ գարուն լիներ: Հայրը հանեց տեարակը և առաջարկեց Գարեգինն, որ իւր ցանկութիւնը զրէ: Գարեգինը զրեց:

III. Ամառնացաւ: Գաշտերի խոտը հասել էր և հընձող էր կանչում: Գարեգինը և իւր հայրը զնային խոտ

Հնձեղու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խոտարը, Գարեգինն իրան ուրախութիւններն էր կատարում. ձուախ էր բռնում գետակից, հատապտուղներ էր հաւաքում, հոտաւէտ խոնճերի վերայ զըրփում էր: Երեկցեան տուն յետ դաւնալիս, նա ասաց իւր հօրը. «Ահա այսօր ես անշափ ուրախացայ: Երանի՛ թէ ամառը վերջ ըռնենար:» Գարեգինի այս ցանկութիւնն էլ զըրուեցաւ տեսարակում:

IV. Վերջապէս եկաւ և աշունը: Այգիներում լատ լաւ պտուղները հասել էին. խնձորը, տանձը, մալորը, սերկնիլը, խաղողը . . . Մարզիկ դուրս էին եկել այգեւկութի: Գարեգինն էլ իւր ձնողաց հետ գնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում էր, երգում, խաղում և պտուղներից բերանը զգելը՝ անուշ անում: Վերջը նա վազեց իւր հօր մօտ և նորա պարանոցովը փաթաթուելով՝ ասում էր. Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է անկասկած:

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա միւնոյն բանն է ասել գարնան, ձմեռուան և ամառուան համար:

\* \*

Պատմեցէք ձերբառերով այս պատմութիւնը. ասաւ ցէք, թէ քանի՛ զլսաւոր կտորների կարող էք բաժանել սորան. ի՞նչ է ասվում իւրաքանչիւր կտորում:

\* \*

Աչքով տեսնում ենք առարկան. ականջով լում ենք Մայր. լեզ. ա. տ. ն. Տ. — Ղ.

նորա ձայնը. քիթով նորա հոտն ենք իմանում, լեզուվ  
—համը, իսկ մատներով շօշափում ենք և իմանում նոռ  
րա պնդութիւնը, փափիութիւնը, թանձրութիւնը, նոս  
րութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը,  
անհարթութիւնը . . .

**Տ**եսողութեան զործարանն ացքն է. լսողուա  
թեան զործարանը . . . հստառութեան զործարա  
նը . . . շօշափողութեան զործարանը . . . ձաշա  
կի զործարանը . . .

**Ա**ռածներ. Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ  
բաներ է լսում:—Անհունար մարդու լեզուն երկար կը լիւ  
նի:—Ուրիշի աչքը քեզ համար լիս չի տալ:—Մի ձեռը  
ծափ չի տալ:

### Կաղն ու կոյրը:

Կաղն ու կոյրը պէտքէ անց կենային մի սրբնթաց  
առուակով. ի՞նչպէս անկին: Կոյրը կաղն շալակեց և երա  
կուսն էլ ապահով անցկացան:

### Փոքրիկ գառը:

Մէկ փոքրիկ գառը, ձիւնի նման մաքուր, սպիտակ.  
Մի օր զնաց իւր մօր հետ գաշտը, որ արածի,  
եւ իւր կամքին սկսեց թոշել քարերի տակը.  
Չէր ուզում որ փոքր միջոց հանդիստ նստի:  
Դարիվեր, դարիվայր վազվզում էր անխոհեմը.  
Թէ քար, թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր, բնաւ չէր նայում:  
Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը.  
Զգոյշ կացի՛ր, որդեակ, լսի՛ր իմ խրատը:

Բայց գառնուկը հէնց խաղում էր ու թռչկոտում,  
Եւ դարիվեր ու դարիվայր միշտ վազվզում:

Վերջն, երբ գառը իւր մօր խօսքին ականջ չարաւ,  
Սարի զլսին իւր գիտութեան պատիմն առաւ.

Մի մեծ քար կար այնտեղ ընկած, որի վրայով  
Մեր գառնուկը խաղ էր անում թռչուելով.

Մէկ էլ տեսնես՝ ոտի մէկը տակովն եղաւ,  
Քսան տեղից կտոր կտոր վշշուեցաւ:

Մեծի ասած, փոքրի լսած:—Ասողին էլ լսող պիտի.

Կաղնին ծառ է, իսկ մասրին թռւփ է:—Զին չորքոտաւ  
նի կենդանի է, իսկ ծիծեռնակը . . . Բահը գործիք է,  
իսկ բազկաթոռը . . . Գնտակը խաղալիք է, իսկ վլաւը .  
. . . Քանոնը գասական առարկայ է, իսկ մուրճը . . . Բա  
զը թռչուն է, իսկ օձը . . . Կաղամբը բանջարանոցի բոյս  
է, իսկ ցորենը . . . Առայտար խոտ է, իսկ սիսեռը . . .  
Երկաթը հանք է, իսկ բգէզը . . . Առիւծը վայրենի գա  
զան է, իսկ ուզուր . . . Տառեխը ձուկն է, իսկ գորտը .  
. . . աղուէսը . . . Խոզը . . . գարին . . . գինին . . .  
բաժակը . . . աիկինը . . . սեղանը . . . փոցիը . . .

### ՄԵՏՈՒՆԵՐԻ ՎԵՃԸ:

Ո ս կ ի ն.

Ամենքը գովում են ինձ, ամենքը պատւում, և մարդ  
չըկայ, որ իմ բարեկամութիւնս չու գենայ: Հարուստները  
ու թէ միայն փողի տեղ են զործածում ինձ, այլ և իւ  
բանց անձը զարդարում են ինձանից շինած շղթաներով,  
մատանիներով և ուրիշ հազարաւոր զարդերով: Ում որ

սիրում են, նորա անունը ոսկի են գնում, ճշմարիստ խօսքը  
հալած ոսկի են համարում . . . է՛տ, էլ ինչ երկարացա-  
նեմ, ոսկու պատիւն ու գինը այնքան մեծ է, որ եթէ ու-  
զենամ, կարող եմ ամբողջ աշխարհս ոսկով գնել։<sup>ւ</sup>

### Ե ր կ ա թ ը:

Հա, հա, շատ ճշմարիստ ես ասում, ոսկի աղայ, գնու-  
մարդկանց աչքերը շատ լաւ ես շլացնում և քեզ ստա-  
նալու համար քիչ մարդիկ չեն իրանց զլուխը մահի տա-  
լիս: Բայց այս էլ լաւ իմանաս, որ ապահով ու կուշտ ապ-  
րելու համար երկաթն աւելի է հարկաւոր: ոսկէ կացնով  
փայտ չեն կորում տռւն շինելու համար: ոսկէ արօրով  
հողը չեն ցելում հացաբոյսեր ցանելու: ոսկէ հրացանով  
մարդիկ իրանց անձը չեն պաշտպանում գազանների և չար  
մարդկանց երեսից: Ուրեմն կուշտ և հանգիստ ապրելու հա-  
մար երկաթ աւելի է հարկաւոր: Դու, ոսկի աղայ, ամեն  
բան կարող ես գնել, իսկ ես, եթէ ուզենամ, կարող եմ  
բոլորը ձեռքիցդ խել: <sup>ուզենաց . . . ցանու խի և անու</sup>

\* \* \*

**Ս**արդիկ. հայր, մայր, եղբայր, քոյր, հօրեղբայր,  
քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, ծերունի, պառաւ, մանուկ,  
տղայ, աղջիկ, տղամարդ, կին, վաճառական, աղքատ . . .

**Կ**են դանին եր. գազաններ, թաշուններ, ձկներ, սոս-  
զուններ, միջատներ, խեցգետիններ, սարդեր:

**Բ**ոյսեր. ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, կա-  
նաչեղիններ, սունկեր, մամուռներ:

**Հ**անքեր. մետալներ, քարեր, հողեր, աղեր:

\* \*

**Ա**զքատը մարդ է . . . թոնիքը . . . թուշնենը . . .  
. . . գիշքը . . . սարդը . . . կիրը . . . մանուկը . . .  
երկաթը . . . եղբայրը . . . ծառը . . . մամուռը . . .  
սոնենը . . . գազանը . . . թուշնը . . . խմալ . . .  
մողը . . . հայրը . . . օրիորդը . . . մետալը . . . աե-  
ղանը . . . հողը . . . միջատը . . .

**Ա**ռածներ. ինչ չի ծնում, նո չի մեռնում: —  
Երկաթը տաք տաք կը ծեծեն: — Ապրիլ կայ երկաթ է,  
ապրիլ կայ արծաթ է:

**Հ**անելուկ. Առաւտեան չորս ոտի վերայ է մանգառ-  
լիս, ձաշին երկու, իսկ երեկոյեան երեք:

**Ա**րագախօսութիւն. Ծիաը ճմբան ծերին, ծտի  
ճուտի ճիտը ծուռ:

### Պ Ս Ա Կ Ն Ե Ր:

**Մ**էկ սիրտ լինինք

Եւ մէկ հոգի.

**Մ**իութիւնը

Վեղեցիկ զարդ է կեանքին:

Էտ միութեան, թէ սիրոյ:

Էտ, լս, լս և այն.

Ինչ խաղում որ,

Մենք գոհ լինինք.

Միշտ պէտք ունիմք

Վեղեցիկ զարդ է կեանքին:

Էտ, լս, լս, լս . . .

ՇՈՒՇԱԿ ՊԱԱԿ:

**Օ**րինակ անմեղութեան,

Դաշտի սիրուն դու շրւշան,

Ե՞կ, միացիր մեր երգին:

Ե՞կ, միացիր մեր երգին:

Լս, լս, լս և այն:

Ե՞կ, զարդ եղիք մեր պարին:

ՎԱՐԴԻ ՊՍԱԿ:

Վարդ ծաղկին լինիք նման  
Եւ օրինակ հեղութեան,  
Թող վարդը հանդստանայ  
Մեր մատաղ սրտի վիրայ:  
Լա, լա, լա և այլն:

ՄԱՆՈՒԾԱԿԻ ՊՍԱԿ:

ԿԱՂՆԻ ՊՍԱԿ:

Աղնիւ, սիրուն մանուշակ,  
Համեստութեան օրինակ,  
Տող միանանք բարեկամք,  
Տող մեղ ծաղիկ դեղեցիկ,  
Եւ յոյսերը անբաժան  
Քո քնքոյշ հոտ անուշիկ:  
Լա, լա, լա և այլն:

### ԱՐՅԻ ԹԱԹԸ:

Գիւղայիք թակարդ սարքեցին և մի արջ բռնեցին  
Արջին սպանելով չսպանեցին, միայն կացնով նորա թա-  
թը կարեցին: Երեք սանանի արջն էլ կաղի տալով փա-  
խաւ, գնաց: Մի խեղճ պառաւ խնդրեց, որ արջի թաթն  
իրան տան, խուզեց նորա վերայի մազը և կաշին էլ մաշ-  
կեց: Պառաւը միար կրակին դրեց եփելու, ինքն էլ նառեց  
կաշուի վերայ և սկսեց մանել նորա մազը: Մանեց, մանեց  
մինչեւ կէս գիշերը: Կէս գիշերին մէկ էլ տեսնես մի ձայն  
է լսվում, մի բան լու սամուտի տակ թրմիւթրմիացնում,  
չզկիչը կացնում է:

Պառաւը լրւսամուտից դուրս մտիկ տուեց և փախից  
քար դարձաւ. տեսնում է, որ երեքոտանի արջը՝ փայտի

վերայ դիմհար տալով, բարձրանում է և մըրթմըրթում է  
Դէհ բարձրանամ, բարձրանամ,  
Լորենի ոսի օդնութեամբ,  
Հունի փայտի օդնութեամբ:  
Արարած աշխարհ քնել է,  
Զուրն էլ վաղուց դադարել է,  
Ամեն մարդ քնած է շնում,  
Ամեն մարդ քնած է դիւղում,  
Միայն պառաւը չէ քնում.  
Իմ կաշխ իւր տակը դցած,  
Իմ բրդից նա թել է մանում,  
Իմ մից կերակուր եփում:

Պառաւը շատ վախեցաւ, որովհետեւ նա կենում էր  
մեն—մենակ զիւղի մի ծայրումը: Ի՞նչ անի, ի՞նչ չ'անի,  
արջեց ի՞նչպէս աղատուի: Արջը քիչ էր մնացել, որ ներս  
մանի. նա արդէն ձեռնախայտով թըլսկ—թըլսկացնում էր:  
Պառաւը թորոնի բերանը բաց արեց ու ինքը բարձրացաւ  
ամիսարի զլու խը: Արջը արփորփելով դուռը գուաւ, կրըն-  
կահան արեց, ներս մտաւ խրճիմի մէջ և սկսեց մթնումը  
պառուտ պտուտ անել. մին էլ տեսնես—թրըմի—ընկաւ  
թորոնը:

Պառաւը շուտով ամիսարի զլիսիցը ցած թռաւ, ծած-  
կեց թորոնի բերանը և գնաց հարեաններին կանչեց: Հա-  
րեաններն եկան և արջին սպանեցին:

\* \* \*

Ամիսներ. յունփար, փետրվար, մարտ, ապրիլ, մա-  
յիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր,  
նոյեմբեր, դեկտեմբեր:

**Զ**մերա յին ամիսներ. դեկտեմբեր, յունվար,  
փետրվար:

**Ա**մարա յին ամիսներ . . . \*

**Ա**շնանա յին ամիսներ. սեպտեմբեր, հոկտեմբեր,  
նոյեմբեր:

**Գ**արնանային ամիսներ . . . \*

\* \*

**Յ**ունվարը ձմերային ամիս է, իսկ մայիսը . . . Սեպտեմբերը աշնանային ամիս է, իսկ փետրվարը . . . Մարտը գարնանային ամիս է, իսկ յունիսը . . . Յուլիսը ամառային ամիս է, իսկ հոկտեմբերը . . . ապրիլը . . . օգոստոսը . . . դեկտեմբերը . . . նոյեմբերը . . .

\* \*

**Տ**արին քանի՞ ամիս ունիք: Ո՞րն է առաջին ամիսը: Ո՞րն է վերջինը: Որո՞նք են գարնանային ամիսները: Ո՞ստից ամառային ամիսները: Ո՞րն է աշնանային վերջին ամիսը: Դա ո՞ր եղանակի ամիս է. ո՞ր երրորդն է . . .

## Մայիսին:

**Երբ** մայիսին ես անցնում եմ անտառով,  
գեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում.

**Ա**մեն մէկը ուրախութեամբ երգելով՝

Աշխատում է տաք բուն շինել թփերում:

**Երբ** անցնում եմ ես ծաղկապատ դաշտերով,  
շատ թիթեռներ և բզեզներ եմ տեսնում.

**Ս**ե ու սպիտակ և հազար մի զոյներով՝

Ծաղկից ծաղեկ թռչուտում են, ծլվում:

**Ա**մայիս, շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,  
որի վերայ ովար, տաւար և այծեր

Ամեն կողմից բառաշում են, ու մայում  
եւ ինձ իրանց աշխոյժ ձայնով դրաւում:

## Մեղուներ:

**Գ**արունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ զեղնած խոտերի մօտ դուրս եկան նոր կանաչ բողբոջներ. ծառերի կոկները բացուեցան և վոքրիկ աերեներ առաջ բերին:

**Ա**հա մեղուն էլ զարթեցաւ իւր ձմերային քնից, սրբեց աշերը իւր բրդոտ թաթիկներով, զարթեցրեց ընակերներին և միասին դուրս նայեցին լուսամնատից, որ տեսնեն թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային սառը քափին անցել են:

**Մ**եղուները տեսնում են, որ արեգակը վայրում է, որ ավեն տեղ տաք է և լոյա. նորանք զուրս են գալիս վեճակեց և թռչում են դէպի ծիրանի ծառը:

**Ա**լիրուն ծիրանենի, չունիս մի բան խեղճ մեղուներիս համար, մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք:

**Ա**ռ, պատախանում է ծիրանի ծառը. դոք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղեկները դեռևս պահուած են կոկներիս մէջ: Գնացէք՝ նշենուն հարցրէք:

**Մ**եղուները թռան—գնացին նշենու մօտ. Վիրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար:

**Վ**աղը եկեք, խնդրեմ, պատախանում է նորանց նշենին. այսօր ինձ վերայ ոչ մի բացուած ծաղեկ չ'կայ. իսկ երբ կը բացուին, ես շատ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:

**Թ**օրան մեղուները կակաչի մօտ, նայեցան նորա փայտ լուն զլսին, բայց նա էլ ոչ հոտ օւնէր և ոչ մեղը:

**Մեղուները** տրտում և քաղցած կտունում էին  
հետ գառնալ տուն, բայց տեսան թվի տակ մի քնքուշ  
մուգ կապոյտ ծաղկի: Սա մանուշակն էր: Նա բայց արաւ  
մեղուների համար իւր կոկոները, որոնք լիքն էին անուշ  
շահուութեամբ և քաղցր հիթով: Կերան—խմելին մեւ  
զուները և ուրախ ուրախ յետ դարձան տուն:

### Հոկտեմբերին:

**Արևն իւր ոյժը կորցրած՝** Երկնքումը ամպի քուլեքն  
Ամպերի տակ ծածկուեցաւ, Անձւեներ են պատրաստում.  
Սաստիկ քամին ողջ ծառերի Անտառը իւր տերեներով՝  
Տերեները զեր ածաւ: Առուն տխուր քչքըսում:  
Հատթուուներ և թիթեռներ ինչի՞ դաշտերի սողուններ  
Անյայտացան դաշտերից. Եւ վայրենի թռչուններ  
Ծառը չունի կանաչ տերեւ, Շտապում են իրանց համար  
Նա զրկում է իւր զարդից: Մի ապահով տեղ գտնել:

\* \* \*

**Աւքը** և քթը դէմքի մասերն են, իսկ աղդը և  
սրունքը . . . Դաստակը և արմռնղը ձեռքի մասերն են,  
իսկ կուրծքը և փորը . . . Գլուխը և պարանոցը մարմնու  
մասերն են, իսկ սպիտակոյը և ծիստանը . . . Բիբը և  
արտեսնունքը աճքի մասերն են, իսկ ատամները և լեզուն  
• . . Մարտը և ապրիլը զարնանային ամիսներ են, իսկ  
տեպտեմբերը և հոկտեմբը . . . Յունիսը և յուլիսը ա-  
մարային ամիսներ են, իսկ յունվարը և վետրվարը . . .  
Գայը և արջը գազաններ են, իսկ ծառը և խոտը . . .  
Սունկը և ծաղիկը բոյսեր են, իսկ աղը և երկաթը . . .  
Սեղանը և պահարանը . . . Արօրը և եղանը . . . Կաթը  
և ջուրը . . . Գրիչը և մատիտը . . . Կիւրակէն և եր-  
կուշարթին . . . Գարունը և ձմեռը . . .

### Կիւրակնամուտ:

Իրինսաժամի զանգակը տուին,  
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.  
Վաղը կիւրակի է, Աստուծու օրն է.  
Վերջացրէք դործերդ, հանգստեան ժամն է:  
**Լ**ույց զիւղացին զաշտումն այս ձայնը,  
Դէպի տուն քշեց եղն ու գութանը:  
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին  
Լցուած մարդիկը աղօթում էին.  
Քրանքի գնով զնած մամերը  
Սուրբերի առաջ մեղմ վառվում էին:

\* \*

**Մանդաղով** վեր են տալիս, իսկ զերանդիով հնձում  
են: Կացնով սղոցում են, իսկ սղոցով կարում են: Դանա-  
կով կարում են, իսկ ասեղով մորթում են: Թիակով կալ-  
սում են, իսկ կամնով քերում են: Ազով լսում են, իսկ  
ականջով տեսնում են: Լեզուով Ճաշակում են, իսկ քթով  
հոտոտում են: Բահով հերկում են, իսկ արօրով քան-  
զում են: Գրչով զրում են, իսկ գրչով կարդում են: Կովը  
և ձին մասկեր կենդանիներ են, իսկ կատուն և շունը խո-  
տակեր: Հաւը և բաղը ընտանի թռչուններ են, իսկ ար-  
ծիւը և ցինը—վայրենի: Գիրքը և մատիտը խաղակը են,  
իսկ գնդակը և բզդանը—դասական առարկաներ:

Այսպէս է:

### Վախկոտ Յովհաննէսը:

**Յովհաննէսի մայրը** տաշտումը խաշ հունցեց և զը-

թեց վառարանի մօտ, որ քացակի, իսկ ինքը գնաց հաւրեանի տուն:

Յովհաննէսը մթնով տուն դարձաւ, կանչեց, ձայն տուեց—մարդ չ'կայ: Յետոյ նա ուզեց կրակ վառել, բայց երբ վառարանին մօտեցաւ, մի պճպըճոցի ձայն լսեց: Աւրեմի քաջը է, մասձեց Յովհաննէսը, և վախից սկսեց դողդողաւ, վայր զցեց ձեռքից լուցկին և սկսեց փափէլ: Հակառակի պէս կրակախառնիցը ոտովն ընկաւ և նորա ծայրը ճակատին զիսպատ: Ավայ, Աստուած, վայ, օգնեցէք, գոռաց Յովհաննէսը և կամենում էր գուրս փախչել տանկցը. բայց գուրս վաղելիս տրիսի ծուպը (թելը) դրան տակովն եղաւ և Յովհաննէսը փոռեցաւ շեմքի վերայ ու ողբայի ձայնով գոռում էր. Ավայ, Աստուած, վայ, օգնեցէք, աղատեցէք. քաջքը բռնել է ինձ:”

Այս գորդոռոցի ձայնը լսեցին հարեանները, եկան, բարձրացրին կիսակենդան Հովհաննէսին, բայց երբ իմացան, թէ բանն ինչումն է, սկսեցին նորա վերայ ծիծաղել: Յետոյ շատ երկար ժամանակ անմենքը բարկացնում էին Յովհաննէսին և ասում, թէ նա ինչպէս վախեցաւ տաշտի խորից, անկիւնում դրած կրակախառնիցը և խւր տրիսի ծուպերից:

### ՈՒԽՈՒՄՆԱՐԱԿ.

#### ՈՐԴԻՆ.

Հայրիկ, ինդրում էմ,  
Ասա ինձ տեսնեմ,

Ցուն չէ յետ դառնում:

#### Հայրը.

Ինչի՞ ամեն օր  
Գէորգ եղբայրս  
Վաղ է մեր կենում,  
Ինչի՞ մինչև ճաշ

Ի՞մ հոգիս, եղբայրդ  
Ամեն առաւօտ  
Վաղ ուսումնարան  
Է միշտ շտապում,

Այն տեղ է մնում: Խելք մարդ լինեն:  
Այսեղ են գնում մասնաւում ու առաջ դասի համար  
Եւ միւս մասնաւիները—  
Նորա ընկերները:  
Նորանք գնում են,  
Որ ուսում առնեն  
Եւ յետոյ բարի:

### Մարդիկ՝ հասակներին և պարապմունք՝ ներին նայելով:

Մանուկ. Պատանի. Վաճառական. Արհեստաւոր. Զօրական. Քահանայ. Աստիճանաւոր. Պարտիզան. Մուրացիկ . . .

Աղքատն ունի հաց ու պաներ, զիշերը քունը չի տանիլ:— Աղքատ ու հպարտ:— Դարբնին դանակ չի լինիլ, ջուշակին պատան:— Երեխին ասին՝ ինչի՞ ես լավս, ասաց՝ խօսքս անց ա կենում, էնդուր:

### Աքաղաղը և կատուն:

Կատուն ու աքաղաղը, բարեկամացան և շատ սիրում էին միմեանց: Կատուն ամենայն օր գնում էր անտառը որս անելու, իսկ աքաղաղին պատուիրում էր, որ տանը նստի, դռները չ'բաց անի և լուսամուտից դուրս չ'նայի, եթէ ոչ՝ գող աղուէսը կը գայ, նորան կը տանի: Կատուն խրատեց և գնաց: Նորա գնալուց յետոյ մօտեցաւ աղուէսը և մտածեց երգելով խաբել ու դուրս կանչել աքաղին: Աղուէսը սկսեց երգել.

Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ, իմ աքլոր, Միրուքդ մետաքսից հիւսած,  
Ոսկեփետուր թագաւոր, Լուսամնւտից դուրս նայիր  
Գլուխդ իւղով օծած,

Աքաղաղը կամեցաւ տեսնել, թէ ով է այս քաղզը  
Երգիչ, բայց լուսամնւտից գլուխը հանեց թէ չէ, աղու-  
էր վերայ թրուաւ, բռնեց խեղճին ու տարաւ: Աքաղաղն  
սկսեց գուշել.

Վայ, աղուէսն ինձ տարաւ  
Դէպի մութ անտառները,  
Դէպի բարձր սարերը  
Ու անծանօթ կողմերը:  
Կատու եղբայր, շուտ հասիր,  
Ինձ սորանից ազատի՛ր:

Կատուն լսեց աքաղաղի ձայնը, վազեց, աղուէսին  
հասաւ, իւր ընկերին ազատեց ու տուն դարձրեց: «Մտիկ  
տո՛ւր, եղբայր, ասաց կատուն, վաղը ես աւելի հեռու պէտքէ  
գնամ. աղուէսին չ'լսես, թէ չէ նա քեզ այնպէս կուտէ,  
որ ոսկորդ էլ չի մնուլ:—կատուն թողեց, հեռացաւ: Ա-  
զուէսն էլի մօտ վաղեց, իւր սիրուն երգն սկսեց.

Ծո՛ւղ-րո՛ւ-ղո՛ւ, իմ աքլոր, Լուսամնւտից դուրս նայիր,  
Ոսկեփետուր թագաւոր, Քեզ համար բերած կուտը,  
Գլուխդ իւղով օծած,

Յորենի լիքը հատիկը  
Միրուքդ մետաքսից հիւսած Հանգիստ կե՛ր ու վայելի՛ր:

Շատ դիմացաւ աքաղաղը և դուրս չնայեց, թէ և  
ցանկանում էր տեսնել, թէ ինչպիսի հատիկներ ունի  
աղուէսը: Աղուէսը տեսաւ, որ աքաղաղը դուրս չէ նայում,  
սկսեց նորից երգել.

Տես, մարդիկ են անց կենում,  
Բռնով յորեն են ցրվում:

Ուոք չը կայ՝ հաւաքէ,  
Ուտէ փորը կշտացնէ:

Աքաղաղն էլ չ'կարողացաւ համբերել. նա անպատ-  
ճառ կամեցաւ տեսնել, թէ ինչ մարդիկ են անցկենում  
և ինչպիսի ցորեն են ցրվում:—Դուրս նայեց: Աղուէսը  
վրայ թռաւ, բռնով նորան ու տարաւ: Աքաղաղը նորից  
սկսեց գուածլ.

Վայ, աղուէսն ինձի տարաւ  
Դէպի մութ անտառները,  
Դէպի բարձր սարերը  
Ու անծանօթ կողմերը:  
Կատու եղբայր, շուտ հասիր,  
Ինձ սորանից աղատի՛ր:

Կատուն հեռու էր. նա հազեւ լսեց աքաղաղի ձայնը,  
բայց էլի վաղեց, աղուէսին հասաւ, եղբօրն աղատեց ու  
տուն դարձրեց: Դնայի՛ր, սի՛րելիս, էգուց ես աւելի հեռու  
պէտքէ գնամ. աղուէսին չ'լսես, լուսամնւտից դուրս չնայես  
թէ չէ կորած ես:

Կատուն թողեց, հեռացաւ: Աղուէսն էլի մօտ վա-  
զեց, իւր սիրուն երգն սկսեց.  
Աքլոր եղբայր, դուրս նայի՛ր,  
Քո չորս կողմէ մասիկ տո՛ւր,  
Ինչպէս Մարկոսի տանը  
Ուրտիսութիւն է լինում.  
Ինչպէս միրուն սահնակներ  
Իրանք իրանց են սահում:

Աքաղաղը կամենում էր գոնէ աչքի տակով նայել  
և տեսնել. թէ ինչպէս են սահնակները իրանք իրանց սա-  
հում. բայց մտածեց. դն՛չ, դուրս չեմ նայիլ. աղուէսը

կերթայ, յետոյ կը նայեմ: « Աղուէսը կամենում էր նորից  
երգել իւր երգը, բայց աքաղաղն ասաց. ոչ, աղուէս, էլ  
չես խարիլ ինձ—էլ դուրս չեմ նայիլ:—Ի՞նչ անեմ, թէ  
չես նայիլ, պատասխանեց աղուէսը—կամենում ես նայիր, չեն  
կամենում, մի նայիր: Մնաս բարով . ես տուն պէտք է զնամ:»  
**Փոքր ի՞նչ հեռացաւ աղուէսը և մի անկիւնում թափա**  
կացաւ: Աքաղաղն էլ նորա ձայնը չէր լսում, ուստի իաց  
մեցաւ գուրս նայիլ, թէ արդեօք խախապէս զնաց աղուէսը: Բայց գուրս նայեց թէ չէ, աղուէսը վրայ թուաւ, բըռա  
նեց նորան ու տարաւ: Շատ գոռաց—գոչեց աքաղաղը,  
բայց կատուն չլսեց նորան. նա արդին շատ հեռու էր:

### Գուշակի թ:

Ծեր Օհանը դուրս եկաւ զաշար. շարժում էր իւր  
թեւերը և միշտ նորանցից թուզուններ էր դուրս թողնում.  
Նա շարժեց չորս անգամ և դուրս արձակեց ընդաւ  
մենք տասներ կու թռչուն: Երբ թռան գնացին առաւ  
ջին երեքը, ցուրտն սկսեց, գետերը սաւան, մարդիկ  
մրւեցան: Երբ թռան երկրորդ երեքը, ձիւնը հաւ  
լուեցաւ, խոտը կանաչեց, գետերը մեծացան, ծառերը ծաղշ  
կեցին:—Երբ դուրս թռան միւս երեքը, եղանակը տաւ  
քացու, շոգերն սկսեցին, արտերն ու պտուղները հասան:  
Երբ դուրս թռան մնացած երեքը, վիշեց սառը քաւ  
մին, սկսեցին անձրւներ և մառախուղներ: Ծերունու թռա  
չունները հասարակ չեն: Նորանցից ամեն մէկը ունէր չորս  
թեւ, իւրաքանչիւր թեւի վերայ հօթը վետաւր, իսկ վետ  
առերների մի կողմը ունէր, միւսը սպիտակ: Ամեն մէկ թռա  
չուն, իւրաքանչիւր թեւ և ամեն վետաւր իւր անունն  
չունէր:

\* \* \*

Ի՞նչ է լինում գարնանը՝ օդի մէջ, գետերում, զաշ  
տերում, անտառներում:

Ի՞նչ է լինում ամառը՝ օդի մէջ, գետերում, զաշ  
տերում, անտառներում:

Ի՞նչ է լինում աշնանը . . .

Ի՞նչ է լինում ձմեռը . . .

Դիմոցին Եի Արջը:

### 1. ԿԱՐՏՈՓԻԼ.

Գիւղացին և արջը բարեկամացան և միասին խոր  
հուրդ արին, որ կարտոփիլ ցանեն: Գիւղացին ասաց. «ԱՌՋ  
բարեկամ, արմատն ինձ, զլուխը քեզ:» Արջը համաձայշ  
նուեցաւ: Շատ լաւ կարտոփիլ դուրս եկաւ: Գիւղացին վեր  
առաւ արմատի կարտոփլահատերը, իսկ վերեկ չոփերը  
տուեց արջին: Արջը շատ էլ վնթփընթաց, բայց ի՞նչ կա  
րող էր անել:

### 2. ՑՈՐԵՆ:

Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. ԱՌՋ  
եղայր, արի! Էլ միասին ցանք անենք:»

— Արի! ցանենք, պատասխանեց արջը, միայն այս տաւ  
րի ես արմատը կը վեր առնեմ, իսկ դու վերեկ մասը:

Գիւղացին համաձայնուեցաւ, բայց այս անդամ  
կարտոփլի փոխանակ ցորեն ցանեց: Շատ առաւ ցորեն  
դուրս եկաւ: Գիւղացին վեր առաւ հասկերը, իսկ արջին  
մնաց արմատները:

Մայր. լեզ. ա. տ. ն. 8—Պ.

\* \* \*

Ի՞նչ բոյսեր դիտէք, որոնց արմասն ենք ուտում։  
Ի՞նչ բոյսեր դիտէք, որոնց վերին մասն ենք ուտում։

### ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՋԻԵՍԻ ՄԱՍԻՆ.

#### I. Գիւղացու վիշտը։

Գիւղացին իւր ցաւերը գանգատուեցաւ որսորդին,  
որ աղուէսը գողացել է նորա հաւանոցից երկու հաւ և  
մի բաղ, որ նա ամենեին չէ վախենում շանից, որը բաւ-  
գումը կապած՝ ամբողջ զիշեր հաջումէ, իսկ եթէ թաւ-  
կարդ է սարքում և վերան էլ փափուկ մնի կտոր է զնում,  
առաւօտը տեսնումէ, որ խորամանկ կենդանին պայտ է  
արել թակարդի չորս կողմով, իսկ մսին ձեռք էլ չէ կա-  
մեցել տալ։ Որսորդը ականջ զրեց զիւղացու գանգատին  
և ասաց. լաւ, այժմ մենք կը տեսնենք, թէ մեղանից ով-  
աւելի խորամանկ է։

#### 2. Որսորդի դիտաւորութիւնը։

Ամբողջ օրը որսորդը հրացանն ուսին, շունը յեւ-  
տեխից, մանէր գալիս աղուէսի հետքերով, որ պարզ երեւ-  
ումէր ձիւնի վերայ, և կամենումէր իմանալ, թէ որւ-  
տեղից է գալիս նա բազը։ Յերեկը այդ խարդախը քնում  
է իւր խոր որջի մէջ, ոչինչ չէ իմանում — ահա այդ ժաւ-  
մանակ պէտք է բանը սարքել։ Որսորդը նորա ճանապարշ-  
հի վերայ մի փոս փորեց, փոսի երեսը ծածկեց տախտակ-  
ներով, վերան հող ածեց, իսկ հողի երեսից — ձիւն։ Մի  
երկու քայլ հեռու՝ նա ձգեց սատկած ձիու մնի կտոր։

Երեկոյեան նա լիք հրացանով մոաւ իւր պատրաստած  
փոսի մէջ և այնպէս նստեց, որ ամեն բան տեսնէ և ար-  
ձակեն էլ յարմար լինի — նստեց և սպասեց։

#### 3. Աղուէսի զգուշութիւնը։

**Մթնեց:** Լուսինը դուրս եկաւ։ Զգուշութեամբ, իւր  
շուրջը նայելով և ականջ դնելով դուրս սողաց աղուէսը  
իւր որջից, բարձրացրեց իւր ցոռուկը և հոտ քաշեց։ Նա  
խկոյն զգաց ձիու մնի հոտը, վազեց մեղմ ընթացքով դէ-  
պի այն տեղը և յանկարծ կանգնեց, ականջները սրեց.  
տեսաւ սատանան, որ այդ տեղ նոր ածուածք կայ, որ ե-  
րեկ չ'կար։ Այս ածուածքը, ինչպէս երկում է, նորան ան-  
հանդիսա էր անում և յարկադրում էր մտածել։ Նա  
միսեց հեռուից պտտել այդ ածուածքի շուրջը, հոտո-  
տել, ականջ դնել, գետնից կպչել և հեռուից երկար նա-  
յել մսին, այնպէս որ մեր որսորդը ամենեին չէր կարող  
արձակել նորա դէմ իւր հրացանը. հեռու էր։

#### 4. Ով ում խարեց։

**Մտածեց,** մտածեց աղուէսը — և յանկարծ ամենայն  
արագութեամբ վազեց անցաւ ածուածքի և մնի միջով։  
Որսորդն զգուշացաւ, հրացանը չարձակեց։ Նա հասկացաւ,  
որ խորամանկ կենդանին փորձ է փորձում, թէ արդեօք  
ոչոք չկայ նստած ածուածքի յետել, և եթէ նա արձաւ  
կէր հրացանը, կարող էր սիսալուիլ և նորան էլ աչքով,  
երազով չէր տեսնիլ։ Այս փորձից յետոյ աղուէսը միամ-  
տուեցաւ. ածուածքը նորան էլ չէր վախեցնում։ Համար-  
ձակ քայլերով մօտենում է նա մսին և ուտում է ամեւ-

նայն բաւականութեամբ: Այդ ժամանակ որսորդը իւր թագկացած տեղեց զգուշութեամբ նշան է դնում, որ չսխալուի և ըմբարձակումէ հրացանը: Աղուէսը գլխաւ դոր է գալիս ու սատկում:

ՀԱԻԾ ԵՒ ԲՈՐԻ ՎԱՌԻԿԸ:

### 1. Պառաւը հաւանոցում:

Առաւօտը շատ վաղ՝ պառաւը գնաց հաւանոցը մի կթոց ձեռքին: Կիթոցի մէջ խոտ էր ածած, իսկ խոտի վերայ դարսած էր տասներեք հատ ձու: Պառաւը դրեց կթոցը մի տաք տեղ և նորա վերայ թուխս նստայրեց մի դանագրաւոր հաւ: Հաւանոցը մութն էր, և պառաւը չկարողացաւ նկատել, որ ձուերից մինը քիչ փոքր էր միւսներից և ոչ թէ սպիտակ, այլ կանաչաւուն:

### 2. Ի՞նչ դուրս եկաւ ձուերից:

Հաւը ճշտութեամբ նստեց ձուերի վերայ. միայն վեր էր կենում կուտ ուտելու և ջուր խմելու և նորից վազում էր իւր տեղը: Անցկացաւ երեք շաբաթ, և սկսեցին ձուերի միջեց դուրս գալ վառիկներ. ձագը ներսից կտուցով խփում էր ձուի կեղելին, կոտրում էր նորան, դուրս էր սողում և իսկոյն վազում էր ճիճուներ որոնելու: Կանաչաւուն ձուից ամենից ուշ ձագ դուրս եկաւ և դուրս եկածն էլ ամենելին նման չէր միւսներին: Նա կոլոր էր, աւելի բրդոտ, դեղին, ոտները կարծ—կարծ, քիթը լայն, մանդալիս էլ օրօրվում էր, այս ու այն կողմն էր ընկնում: Տեսնումէ հաւը, որ այս ձագը բոլորովին ուրիշ տեսակ

բան է, բայց էլի պահպանում ու կերակրում է նորան, ինչպէս միւսներին—հէնց որ տեսնում է ցինը, սկսում է իւր թերի տակ ժողովել ինչպէս բոլոր վառիկներին, այնպէս էլ սորան:

### 3. Ուր կորաւ այդ վառիկը:

Վառիկները մեծացանու հաւը նորանց տարաւ լծի աիր, ուր շատ ճիճուներ կար և հողն էլ աւելի փափուկ էր քջուջ անելու համար: Հէնց որ կարձաւոս վառիկը տեսաւ ջուրը, իսկոյն ընկաւ նորա մէջ: Հաւն սկսեց կրկչալ, թեւերը թափահարել, դէպի ջուրը վաղել. միւս վառիկները նմանապէս շփոթուեցան, վազվազեցան, ծվծը վային. փոքրիկներից մինը երկիւղեց թուաւ, կանգնեց մի քարի վերայ և առաջին անգամ երգեց՝ ծու—ղը՛ւ—ղը՛ւ: Բոլոր ձագերը շփոթուեցան. իսկ կարձաւոս ձագը հանադարտ լողում էր ջրի երեսին, ոչինչ բանից չէր վախենում և ջուրը ճեղքում էր իւր թաղանթապատ թաթիկներով: Հաւի կրկոցի վերայ դուրս վազեց պառաւը: Հէնց որ տեսաւ նա, թէ ինչ է պատահում, իսկոյն բացականչեց. Ա՛յս, ինչպէս սխալուել եմ. մընումը չեմ կարողացել նկատել, որ հաւի տակ բաղի ձու եմ դնում: Այս ասելուց յետոյ, նա հաղիւ կարողացաւ դէպի տուն քշել թուխոր:

### ՕՉԸ ԱՌԱՋ ՏԱՔԱՅՆՈՂԻՆ ԿԸԿԾԻ:

Գիւղացին տեսաւ մի օձը, որ ցրտից սառել էր, վեր կալաւ, դրեց ծոցումը և տաքացրեց: Օձը տաքացաւ թէ չէ, գլուխը հանեց, յարձակուեցաւ գիւղացու վերայ և կամենում էր կծել նորան: Գիւղացին ասաց. «Այ օձ, ես քեզ

տաքայրի, մեռնելուց ազատեցի, որ ինձ կծեսա: 0ձը  
պատասխան տուեց. «Աստուած մեզ միայն կծելու շնորք է  
տուել. մենք աւելի պէտք է մարդկանց կծենք, եթէ նու-  
րանք մեզ ազատած էլ լինին, որովհետեւ մարդու պէս  
ապերախտ արարած չ'կայ աշխարհումն:» Գիւղացին ասաց.  
«Այ օձ, արի ինձ մի' կծիր, քո ձերքովդ իմ դատաստանս  
մի' կտրիր, թող կանչենք երեք դատաւոր և նորանք՝ մեր  
դադասատանն անեն:» 0ձը համաձայնեցաւ. կանչեցին մի պա-  
ռաւ ձի: Զին ասաց. «Մարդը ամենից ապերախտն է աշ-  
խարհիս երեսին. ես նորան քանի քանի տարի է ծառա-  
յում եմ, նորա կեանքը պատերազմերի մէջ աղատել եմ,  
նորան մինչեւ այսօր շալակած ման եմ ածել և հիմայ, որ  
ծերացել եմ, էլ երեսիս չէ մոլիկ տալիս և կամենում է  
ինձ մորթել տալ, որ կաշիս ծախէ:»

Յետոյ կանչեցին մէկ ծեր գոմէշ: Գոմէշն ասաց.  
«Մարդու պէս ապերախտ արարած չեմ տեսել աշխար-  
հում:— Քանի որ ես փոքր էի և ուժեղ, նա ինձը լծեց  
իւր սայլում, արօրում, ցաքանում և ամեն կերպով  
ծառայեցրեց ինձ. Հիմա՝ երբ մի փոքր ծերացել եմ, կա-  
մենումէ ինձ մորթել, իմ միսն ուտել և կաշուիցս իւր  
համար տրէխներ շնուր:»

Գիւղացու բանը վատ էր: Մի դատաւորն էր մնա-  
ցել: Կանչեցին աղուէսին: Աղուէսը՝ տեսնելով թէ բաննինչ  
տեղն է հասել՝ փսփսաց զիւղացու ականջումը. «Եթէ  
ինձ մի չաղ հաւ կը խոստանաս քո հաւարունից, ես քեզ  
կ'ազատեմ:» Մարդը գլխով արեց: Աղուէսն այսպէս սկսեց  
խօսել. «0ձ եղբայր, ես ամենից առաջ շատ եմ զարմա-  
նում, թէ ինչպէս ես գու տեղաւորում այս ծակի մէջ. չէ,  
ես չեմ հաւատում, այս քո բունը չպէտքէ լինի, ինդրեմ  
մի փորձի համար ներս սողա մէջ, թեանեմ:» 0ձը ներս

սողաց բնի մէջ: Խորամանկ աղուէսը նորա բնի բերանը  
մէկ քարով ծածկեց և խեղճ զիւղացուն օձից աղատեց:

Միւս օրը՝ առաւօտեան գնաց աղուէսը զիւղացու  
տուն հաւն ստանալու: Գիւղացին քնած էր: Նորա ծա-  
ռաները սաստիկ թակեցին խեղճ աղուէսին և ձանա-  
պարհ գցեցին: Այն ժամանակ աղուէսը՝ թափտալով  
իւր պոչը՝ ասաց. Ճշմարիտ որ մարդը շատ ապերախտ է  
եղել:

## ՔԱԶԱԳՈՐԾ ԿԻՍԼԱՆԶԲ

Պառաւի որդիքը:

Մի պառաւ ունենում է երեք տղայ, ոյսոնցից փոք-  
րը կիսլանջ է լինում: Նորանք ապրում են խեղճ, աղ-  
քատիկ: Մի օր պառաւն ասում է իւր որդոցը, որ գնան  
ուրիշ աշխարհներ, աշխատանք անեն: Երկու մեծ եղբայր-  
ները զուրս են գալիս, գնում են և փոքր եղբօրը. չեն թո-  
զում, որ իրանց հետ գնայ. Տիծաղում ին նորա վերայ  
և ասում են, թէ զու ինչ բան ես, որ ուզում ես մեզ  
հետ գալ: Խեղճ կիսանջը մնում է տանը, իսկ եղբայր-  
ներըն ուրիշ ուրիշ ճանապարհով գնում են:

## ՄԵԾ Եղբօր արկածները:

Գնում է գնում մեծ եղբայրը և պատահում է մէկ  
հովուի:

«Բարի լոյս, հովիւ եղբայր:»

— Աստուծոյ բարին, օտար եղբայր: Օտար եղբայր,  
ուր ես գնում:

«Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նորա  
գանձը առնեմ:» Այս որ լսում է հովիւր, սկսում է  
երգել.

Ահա մի մահկանացու իւր գլխից ձեռք վերառած,

Դատարկ յոյսերից խաբուած, իմ երկու սև այծերը,  
Կամենում է զոհ լինել Մինի վերայ կը նստեմ,  
Մեծ վիշապին մարդակեր: Կը լուստրեմ ողջ հօտը.  
Արի, եղբայր, մի' անիր,  
Փորձուած հովուիս ականջ Եթէ զու այդ միջոցում  
Հիր: Ապա ես չեմ կասկածում,  
Ես քեզ համսր կը կթեմ Կարող ես նորան յաղթել:

**Եւ** կթեց հովիւն իւր երկու սև այծերը կաթւ  
Նով լորեց մի մեծ կովկիթ, բրդեց ու դրեց մեր ճանա-  
պարհորդի առաջ և ինքը հեծաւ սև այծն ու սկսեց պը-  
տրտել ամբողջ հօտի գլխով: Պը տրեց — և երբ եկաւ ճա-  
նապարհորդի մօտ, տեսաւ, որ գեռ կէսն էլ չէ կերել:  
Բարի հովիւը նորից սկսեց երգել.

**Արի,** եղբայր, մի' անիր,  
Փորձուած հովուիս ականջ դիր:  
Յետ դաւ, գլուխդ ազատիր:

**Ականջ** չ'արեց մեր ճանապարհորդը լսեղջ հովուի  
Խոօրին և սկսեց առաջ գնալ: Գնաց, գնաց, շատն ու  
Քիչն Աստուած գիտէ, և տեսաւ մի ուղտապան:  
“Բարի աջողում:”

— Աստուծոյ բարին; Օ'տար եղբայր, իւր ես գնում:  
«Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նորա-  
գանձն առնեմ:»

Ուղտապանն այս որ լսեց, սկսեց երգել իւր սովո-  
րական երգը.

**Ահա** մի մահկանացու Արի, եղբայր, մի' անիր,  
Իւր գլխից ձեռք վերառած, Ուղտապանիս ականջ դիր,  
Դատարկ յոյսերից խաբուած, Իմ ուղտերիցս մինը  
Կամենում է զոհ լինել Կրկանգնացնեմ այս տեղ,  
Մեծ վիշապին մարդակեր:

Վեր տեղիցը կը շարժես, Ապա ես չեմ կասկածում,  
Որ վիշապին կը յաղթես:  
**Ասաց** ու կանգնեցրեց իւր ուղտերից մինը: Մեր Ճա-  
նապարհորդը վչեց-վչեց, բայց ուղտը տեղիցն էլ չ'ար-  
ժուեցաւ: Այն ժամանակ աղնիւ ուղտապանը նորից սկսեց  
իւր երգը.

**Արի,** եղբայր, մի' անիր,  
Ուղտապանիս ականջ դիր,  
Յետ դաւ, գլուխդ ազատիր:  
Ծիծաղեցաւ մեր ճանապարհորդը բարի ուղտապա-  
նի վերայ և սկսեց առաջ գնալ: Գնաց ու հասաւ վիշա-  
պի տունը: Դրան ճեղքից մակի արեց, տեսաւ, որ վիշա-  
պը կրակի առաջ նստած, կերակուր է եփում իրան հա-  
մար: Պառաւի տղան ասաց.

Վիշապ եղբայր, գուրս արի', Հարստութիւն, մեծ գանձեր.  
Միմեանց հետ կրիւ անենք: Եկել եմ քեզ սպանեմ,  
Լաւ եմ, որ փող ունիս, Եւ ստանամ այդ փողերն:

**Ուրախացաւ** վիշապը, որ մի ծառայ իւր ստովն ե-  
կել է իւր դուռը և ներսից պատավսան տուեց.

«Օ՛տար եղբայր, քո ձայնից Աղաջում եմ, ինձ խղճա,  
Իմ սիրտս կտրատվում է, Մի' սպանիր չարաչար.  
Բոլոր մարմինս երկիւղից, Մտիր, իմ բոլոր տունս  
Պտն ու ձեռս դողում է: Քեզ մատաղ է, վիշրառ, տար:

**Խաբուեցաւ** մեր ճանապարհորդը և միամիտ մտաւ  
Վիշապի սենեակը: Վիշապը բունեց իւր հիւրին և գցեց  
ներքնատան մէջ:

**Միջնակ եղբօր վիճակը:**

**Միւս** օրը վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ թա-  
կում է իւր դուռը և ասում է.

Ավշապ եղքայր, դուրս արի, Հարստութիւն, մեծ դանձեր,  
Միմեանց հետ կուր անենք, Եկել եմ քեզ սպանեմ, և  
Լսել եմ, որ փող ունիս: Եւս ստանամ այդ փողերն:

**Վ**իշապը զարմացաւ, որ այսպէս շուտ շուտ են հիւր  
գալիս իւր մօտ մարդիկ և ներսից պատասխանեց.

«Օ՛տար եղքայր, քո ձայնից Աղաւում եմ, ինձ խղճա՞ն,  
Իմ սիրտս կտրատվում է, Մի՞ սպանիր չարաչար.

Բոլոր մարդնա երկիւղեց, Մտի՞ր, եմ բոլոր տունս  
Ոտն ու ձեռս դողում է: Քեզ մատաղ է, վիրառ, տար:

Ուրախացաւ մեր անձանօթը և հպարտ հպարտ ներս  
մոտաւ: Վիշապն ուղարկեց նորան իւր եղքօր մօտ:

### Վիսլանջի քաջագործութիւնը:

Անցկացաւ մի փոքր ժամանակ: Մեր հովուի մօտ եւ  
կաւ մի մարդ, մի զարմանալի կիսլանջ մարդ և հարցրեց,  
թէ այս տեղով երկու եղքայր չե՞ն անցկացել: Հովիւը պատա-  
մեց, որ երկու մարդ, իւր խրատին չ'լսելով, գնացին այժինչ  
վիշապին սպանելու, և աւելացրեց՝ թէ հիմայ նորանք վի-  
շապին զոհ կ'լինին դարձած: Կէս մէջքանի, մի կոնանի  
մարդը պատասխանեց. «Նորանք իմ եղքայրներս են և ես  
գնում եմ նորանց վրէմն առնելու:» Բարի հովուը ժըսկ-  
տաց և երգեց.

Եղքայրներդ ջուխտ ձեռքով, Ես քեզ համար կը կթեմ  
և այն թիկունքով, հաստ վզով, իմ երկու սե այծերը,  
ինչ շահուեցան նորանից, Մինի վերայ կը նստեմ,  
թէ դու, կիսլանջ, ինչ շահուիս: Կը պըտըսեմ ողջ հօտը.  
Արի, եղքայր, մի' անիր, Եթէ դու այն միջոցում  
Փորձուած հովուիս ականջ կարացիր բոլորն ուտել,  
Չի՞ր.

Կարող ես նորան յաղթել:

Եւ կթեց հովիւն իւր երկու սե այծերը, կաթնով  
լորեց մի մեծ կովկիթ, բրդեց ու զրեց մեր կիսլանջի  
առաջ, իսկ ինքը հեծաւ սե այծն ու սկսեց պըտըտել ամ-  
բողջ հօտի գլխովը. բայց երբ որ հասաւ մեր կիսլանջին,  
տեսաւ որ նա կերել պրծել է ու կովկիթը կլեկում է:  
Հովիւը զարմացաւ և սկսեց երգել.

Քսան տարի հովիւ եմ, Ողջ կեանքումն չեմ տեսել:  
Շատ մարդիկ եմ ես տեսել, գնա՞ն, եղքայր, համարձակ,  
Շատ մարդիկ հէնց այս փորձով Ասոււած քեզ հետ, կարողես  
Ես ճանապարհ եմ գցել. Զար վիշապին սպանել,  
Բայց այսպիսի մի զարմանք Փողն ու գանձը վերառնել:

**Ա**ռաջ գնաց մեր կիսլանջը և պատահեցաւ ուղտա-  
պանին: Բարի աջողում. ուղտապան եղքայր, այս Ճանա-  
պարհով երկու օտար մարդ չե՞ն անցկացել:»

— **Ա**ստուծոյ բարին: Հա՞ն, այս Ճանապարհով անց-  
կացան եկու մարդ: «Նորանք ջոկ ջոկ էին և զնում էին  
այս ինչ վիշապին սպանելու: Խե՛ղց եր:

Վիսլանջն ասաց. «Նորանք իմ եղքայրներս էին և ես  
գնում եմ նորանց վրէմն առնելու: Բարի ուղտապանը ժըսկ-  
տաց և երգեց.

Եղքայրներդ ջուխտ ձեռքով, իմ ուղտերից ես մինը  
և այն թիկունքով, հաստ վզով, Հրկանդնեցնեմ այստեղ.

Ինչ շահուեցան նորանից, Եթէ նորան վչելով  
թէ դու, կիսլանջ, ինչ շահուիս: Եւր տեղեցը կը շարժես,  
Արի, եղքայր, մի' անիր, Ապա ես չեմ կասկածում,  
Ուղտապանիս ականջ դիր. Որ վիշապին կը յաղթես:

**Ա**սաց ու մի մեծ ուղոքերեց, կանգնեցրեց մեր կիս-  
լանջի առաջ: Կիսլանջն այնպէս փչեց ուղտին, որ նա  
հինգ գալ յետ ու յետ գնաց ու թրընիկ-վայր ընկաւ:  
Ուղտապանը զարմացաւ և սկսեց երգել.

Շատ տարի է ուղտապան, Ես ձանապարհ եմ զցել,  
Շատ մարդիկ եմ ես տեսել, Բայց այսպիսի մի զարմանք  
Շատ մարդիկ հէնց այս փորձով Ողջ կեանքում չեմ տեսել:

Գնա՞ , եղբայր, համարձակ,  
Աստուած քեզ հետ. կարողես  
Զար վիշապին սպանել ,  
Փողն ու գանձը վեր առնել :

**Պ**նաց մեր Կիսլանջ բարեկամը, Հասաւ վիշապի  
տունը, դուռը ծեծեց և ասաց.

Վիշապ եղբայր, թէ քաջ ես Ես եկել եմ Հասաւ վիշեդ  
Դուրս արի, կոիւ անենք, Երախները կտրատել  
Բաց ու արձակ սրահում Եւ Հասաւ կոկորդը կտրելով,  
Միմեանց զօրութիւն փորձենք, Եղբայրներս ազատել:

**Վ**իշապը զարմացաւ այս յանդուգն խօսքերի վերայ  
և ուզեց Կիսլանջին էլ խաբելով ներս հրաւիրել, ուստի  
սկսեց եգել.

«Օ՛տար եղբայր, քո ձայնից Ազատում եմ, ինձ խղճա՞ ,  
իմ սիրտս կտրատվում է: Մի՞ սպանիր չարաչար,  
Բոլոր մարմինս երկիւղեց, Մտի՛ր, իմ բոլոր տունս  
Ոտն ու ձեռս դողում է, Քեզ մատաղ է, վե՛րառ, տա՛ր:

**Չ**'խաբուեցաւ խելօք Կիսլանջը և նորից սկսեց երա  
գել.—

Զուր տեղն ես աշխատում, Ինձ Կիսլանջ են անուանում.  
Վախկոտ վիշապ, ինձ խաբել. Եկել եմ քեզ սպանեմ:

Բարկացաւ վիշապը, կատաղեցաւ այս ծաղրալի աւ  
նուան վերայ, դուրս վազեց զայրացած, որ յանդուգն  
մարդու մեծ պատառն ականջը թողի: Բայց Կիսլանջը վառ  
զուց քաշուել էր պատի տակը: Վիշապը զլուխը դուրս  
հանեց թէ չէ, քաջ Կիսլանջը իւր լրանոց թուրը որ

վրայ չըբերեց, նորա գլուխը երկու կտոր եղաւ: Սարի նըւ  
ման վիշապը վայր ընկաւ և սատկեցաւ:

### Եղբայրների ապերախտութիւնը:

Կիսլանջը գնաց և իւր եղբայրներին ողջ ու առողջ  
հանեց վիշապի բանալից: Բոլոր տունը պըարտեցին, մանւ  
եկան, և վերջապէս գանձը գտան: Բայց եղբայրների սիրա  
որ փուխուեցաւ: Նորանք նախանձուեցան, որ իրանց փոքր  
եղբայրը այդ քաջութիւնն արաւ, այս պատճառով դցեա  
ցին իրանց ազատողին հորի մէջ, վեր առան իրանց ոսա  
կով միքը պարկերը և ձանապարհ ընկան դէպի տուն:

### Կիսլանջի բարեսրտութիւնը:

Այց Կիսլանջը հորի մէջը չըմեռաւ: Նա իւր եղունդա  
ներով ոտնատեղեր շինեց և շատ չարչարուելուց յետոյ,  
դուրս եկաւ հորից, վեր առաւ իւր ոսկով լիքը պարկը և  
ձանապարհ ընկաւ: Գնաց տեսաւ, որ իւր եղբայրներն իւ  
րանց պարկերը վեր են դրել ծառի տակը և ստուերումը  
քնել են: Կամաց կամաց մօտ գնաց, զգուշութեամբ վեր  
առաւ պարկերը, տարաւ թափեց նորանց միջի ոսկին մի  
նշանով տեղ, մէջները մանր խիճով լքցրեց և բերեց իւ  
րանց առաջուայ տեղը զրեց ու ինքը թագկացաւ: Եղբայր  
ները վերկացան, վեր առան իրանց պարկերը և ձանա  
պարհ ընկան դէպի տուն: Կիսլանջն էլ գնում է նորանց  
յետելից. Երբ որ մեր ապերախտները տուն հասան, դուռը  
ծեծեցին և ասացին.

«Մայրիկ—մայրիկ, դուռը բաց. Նորա ոսկին պարկերով  
Վիշապին սպանեցինք, Շալակած այստեղ բերինք:»

**Պառաւը,** ոսկու ձայնը որ լսեց, ուրախ ուրախ դուրս  
վագեց, որդիերանցը համբուրեց, ապա շտապեց, մի թաւ  
բախ բերեց և ի՞նչ դարդակեց—խիճ: Եղբայրները փայտի  
պէս սառած մնացին: Մին էլ տեսնես հերթիցը մի ձայն  
եկաւ.

ԱՄԱՐԻԿ—մայրիկ, դուռը բաց: Հորի մէջը ձգեցին:  
Վիշապին սպանեցի,  
Նորա ձեռքից ես դորանց Բայց Աստուածին օդնական,  
Ողջ ու առողջ փրկեցի.  
Խակ դորանք ինձ խաբեցին. Դորանց պատիմն էլ տուեց.  
Ուզելով ինձ սպանել Սիայն դորանց մայր, ներիք

ԱՄԱՐԾ համբուրեց իւր բարի կիսանջին և նորա  
համար ձուաձեղ արեց:

### Թռչնակ:

Մ ա ն ո ւ կ ն ե ր.

ԱԲՐՈՒՆ թռչնակ, բռնուեցար,  
Ցանցից չես ազատուիլ.  
Ունչ բանով աշխարհում  
Քեղանից չենք բաժանուիլ:

Թ ո չ ն ա կ.

ԱՌԱ, ձեր ի՞նչին եմ պէտք ես,  
Սերելի մանուկներ,  
Թողէք ինձ ազատ թռչեմ.  
Բացէք ցանցիս դռներ:

Մ ա ն ո ւ կ ն ե ր.

**ԶԷՇ,** չէ՛, թռչնակ, չենք թողնիլ.

Դու մեզ մօտ կրմնաս.

ՄԵՆՔ քեզ շաքրէ հաց կ'տանկ,  
Կ'ուտես, կ'ուրախանաս:

Թ ո չ ն ա կ.

ԱՌԱ, շաքրէ հաց չեմ սիրում,  
Քաղցրեղէն չեմ ուտում,  
Թողէք, դաշտի մորեխներն,  
Շաքրից լաւ եմ հաշվում:

Մ ա ն ո ւ կ ն ե ր.

ԱՅՆԹԵՂ դաշտում ձմեռը  
Գուցէ ցրտից սատկես,  
Խակ մեզ մօտ ոսկուց շինած  
Վանդակի մէջ կ'ապրես:

Թ ո չ ն ա կ.

Օ՛, մի վախէք՝ ձմեռը  
Տաք կողմեր կրմռչեմ.  
Խակ բռնուած դրախտն էլ  
Ինձ բանտ կրհամարեմ:

Մ ա ն ո ւ կ ն ե ր.

Թռչնակ—թռչնակ, մենք ի՞նչպէս  
Քեզ կրփաղաքէինք.  
Զէինք թողնիլ, որ ախրես,  
Միշտ կ'ուրախացնէինք:

Թ ո չ ն ա կ.

Հաւատում եմ. բայց ձեր սէրն

Ինձ միշտ կ' վնասէք,  
Որովհետև զորանով  
Աչքս յաւիտեան կ' փակուէք:

Մանուկ ներ.

Ճշմարիտ է, ովկ թռչուն,  
Գերութեան չես տանիլ.  
Աստուած քեզ հետ, դէհ թռիր,  
Ազատ, ուրախ եղիք:

Արագախօսութիւն. Ծիսը ճմբան ծերին, ծտի  
Ճուտի Ճիսը ծուռ:

Հ Յ Ա Ի Ե Ր :

Եկէք, բարեկամէք, եկէք,  
Արագ արագ վաղեցէք.  
Դասի սեղանը դրած է,  
Դասագրքերը բերած է.  
Ժամանակ է, վաղեցէք,  
Եկէք, բարեկամէք, եկէք:

Ե Պ Գ Ե Պ

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ.

Քուն եղի՛ր, բալաս, աչքդ խուփ արա՛,  
Նաշխուն աչերուդ քուն թո՛ղ գայ վրայ.  
Օր օր օր բալաս, օր օր օր նանի,  
Իմ անուշ բալիս քունը կրտանի:

Օսկէ խաչ վզետ քեզի պահապան.  
Նարօտ կապել է ծարէն տէր բարան.

Օր օր օր բալաս, օր օր օր նանի,  
Իմ անուշ բալիս քունը կրտանի:

Մավի հիլուներ կախել եմ ես ալ,  
Նազար չես առնուր, քուն եղի՛ր, մի լար.

Օր օր օր բալաս, օր օր օր նանի,  
Իմ անուշ բալիս քունը կրտանի:

Աս քանի՛ մօրդ անքուն աչքովը  
Անցել են օրեր օրոցքիտ քովը.

Օր օր օր բալաս, օր օր օր նանի,  
Իմ անուշ բալիս քունը կ' տանի:

Օրոցք օրբեմ, օրով բայ քաշես.

Մղկտան ձայնով սիրտս չի մաշես. օր օր օր...  
Գուն ալ քուն եղի՛ր, ինձի ալ քուն տռւր,  
Սուրբ Աստուածածին, Մանուկիս օր տնւր:

Օր օր օր բալաս և այլն:

Ա Դ Ա Ս Ո Ւ Մ Օ Ր Ե Ր Գ Ը:

**Զ**արթիր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աչերը  
թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանդիր քու մօրը.  
բաւ քեղ, որքան բարի հրեշտակը հեքաժ ասին երազում,  
Այժմ արի քեղ այն պատմեմ, ինչ պիտ տեսնես աշխարհում  
Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,  
Բաց աչերդ այդ նաշխուն:

Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,  
Կեանք ու արեն է տեսնում:

Դուն կը մեծնաս, բոյ կը բաշես, չինար բոյիդ ես զուրբան,  
Քեղ ուժ կուտան լասսի քաջըը, որ զու լինիս քաջ վարդան.  
Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գոտի եմ կարել,  
Գօտիիցդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրել:

Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,  
Բաց աչերդ այդ նաշխուն,

Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,  
Կեանք ու արեն է տեսնում:

**Ա**եր բակումը ձի է կայնած՝ քեղ է մնում անհամբեր,  
Զարթիր, որդեակ, քանի՞ քնես, առ քո սուրը մահաբեր.  
Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,  
Բաց աչերդ այդ նաշխուն,  
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,  
Կեանք ու արեն է տեսնում:

**Զ**է. իմ որդիս շուտ կըզարթի, ձին կը հեծնիս սանձակոծ,  
Հայի արցունքը կըսրբէ, կըզադարացնէ լաց ու կոծ.  
Հայ եղբայրներ, քիչ էլ կացէք, իմ Աղասին զարթեցաւ,  
Գօտին կապեց, թուրը կախեց ու իւր նժոյդ ձին նստաւ:

ԳԵՐԻ ՅՈՅՆԸ ԲԱՆՏՈՒՄԸ:

**Հ**այրենիք սրբազան,  
Իմ սիրուն աշխարհ,  
Թռչում եմ դէպի քեղ,  
Հոգովս անդադար:

Բայց աւաղ, այս բանտում  
Փակուած եմ անտես,

Պատերազմի դաշտում  
Զեմ կովում և ես:

**Հ**անապաղ տանջուեցայ  
Քո ճակատազրով,  
Արտումն շղթաների  
Զայներ կրելով:

Թուղ այստեղ չարչարվեմ  
Անծանօթ կապուած,  
Միայն քեղ, հայրենիք,  
Տեսնեմ աղատուած:

**Ա**նս, քո աղատութիւնը  
Փոթորկի մէջ է  
Եւ վառ արշալուսի  
Օր քո խաւրում է:

**Զ**'գիտեմ ինչպէս է  
Կոխւն հրդէհում,  
Ես չունիմ ոչինչ լուր,  
Բայց լուրն է թռչում:

Ատանումեմմիշտ համբաւ  
Սպանութեան ահեղ,

Թափիզում է աղդարիւն,  
Բայց ես չեմ այնտեղ:

**Կ**ըսիշրեմ իմ շղթան,  
Կ'ելնեմ այս բանտից,  
Արբել դառն արտասուք  
Քո սէդ աչերից:

Քաջալնիկներով  
Ճեշտ է ինձ կոռւել,  
Եւ սուրբ գործի համար  
Քաղըր է մեռանել:

**Զ**եմ կարող մոռանալ,  
Իմ աղդ հարազատ,  
Անս, կամ ոչնչանալ,  
Կամ լինիլ աղատ:

ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԻ:

**Ծ**իծեռնակ, ծիծեռնակ,  
Գու գարնան սիրուն թռչնակ,  
Գէպի ուր, ինձ ասա՛,  
Թռչում ես այդպէս արագ:

**Ա**նս թոիր, ծիծեռնակ,

Ծնած տեղս Աշտարակ,

Անդ շինիք քո բունդ,

Հայրենի կտուրի տակ:

**Անդ հեռու ալեոր**

Հայր ունիմ սգաւոր,

Որ միակ իւր որդուն

Ապասում է օրէ օր:

**Երբ տեսնես զու նորան,**

Խնձնից շատ բարեւ արա՛,

Ասա. թող նստի լայ

Իւր անբաղդ որդոյ վրայ:

**Դու պատմէ՛, թէ ինչպէս**

Սստ անտէր ու խեղճ եմ ես,

Միշտ լալով, ողբալով,

Կեանքս մաշուել եղել կէս:

**Ինձ համար ցերեկը**

Մութ է շրջում արեգը,

Գիշերը թաց աշքիս

Բունը մօտ չէ դալիս:

**Ասիր, որ չը բացուած,**

Թառամեցայ միացած,

Ես ծաղեկ գեղեցիկ,

Հայրենի հողից զըկուած:

**Պէհ, սիրուն ծիծեռնակ,**

Հեռացիր, թոփիր արագ,

Գէպի հայոց երկիրը,

Ծնած տեղս Աշտարակ:

ԻՏԱԼԱՅԻ ԱՂՋԱՅ ԵՐԳԻ:

**Երբ հայրենիք թշուառ, անտէր,**

Մեր թշնամուց ոսնակոխ,

Իւր որդիքը արդ կանչում է

Հանել իւր վըեժ, քէն ու ոխ:

**Անդ հայրենիք շղթաներով**

Այսքան տարի կապկապած,

Իւր քաջ որդւոյ սուրբ արիւնով

Պիտի լինի ազատուած:

**Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,**

Որ իմ ձեռքով գործեցի,

Գիշերները ես քուն չեղայ,

Արտասուրով լուացի:

**Այլիր նորան, երեք գունով**

Նուիրական մեր նշան

Թող փողփողի թշնամու դէմ,

Թող կործանուի Աւստրիան:

**Ինչքան կին մարդ, մի թայլ էակ**

Պատերազմի գործերում

Կարէ օգնել իւր եղօրը,

Զանց չ'արեցի քո սիրուն:

**Ահա իմ գործ, ահա իմ դրօշ,**

Ճուտ ձի հեծիր քաջի պէս,

Գնա—փրկիր մեր հայրենիք

Պատերազմի վառ հանդէս:


**Ամենայն տեղ մահը մի է,**

Մարդ միանդամ պիտ' մեռնի,

Բայց երանի, որ իւր ազգի

Ազատութեան կը զոհուի . . .

Դա ա զօհ ամանու և ա թուարու և զամփ  
առ, ամամայալ, և այս և նկա արար և ա լուր  
անու պիտի:



## Ա Դ Օ Թ Ք Ն Ե Բ :

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն:

### Աղօթք Սրբոյ Երրորդութեան:

(Փառաբանական)

Փառք և երկրագութիւնն ՚ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

### Առ Երրորդութիւնն:

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

### Աղօթք Տէրունական:

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիսյի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկիր: Զհայ մեր հանապազորդ տուր մեղ այսօր: Թող մեղ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապահաց և մի՛ տանիր զմեղ ՚ի փորձութիւն, այլ փրկեալ զմեղ ՚ի չարէ, զե քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:

### Աղօթք Սրբոյ Աստուածածնի:

Անկանիմք առաջի քո, Տիրամայր Սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեալ վասն անձանց մերոց և աղաչեալ զՄիածին Որդիդ, փրկել զմեղ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

### Ճամամուտ Յարութեան:

Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց, մահուամք զմահ կուխեց, և յարութեամք իւրով մեղ զկեանս պարզեեց. նմա փառք յաւիտեանս ամէն:

### Ճամամուտ Խաչի:

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո, անկա-



Նիմք երկլազագելով և խնդրեմք զժողութիւն յանցանաց  
մերոց. քանզի սովու բարձեր զդատապարտութիւն ազգի  
մարդկան: Եւ այժմ վասն Աստուածային քո նշանի, շնոր-  
հեա զերկնային զիսաղութիւնդ աշխարհի:

### Աղօթք առաւօտեան:

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ,  
ամենակալ, ամենամեծդ Աստուած, 'ի քո անապական և  
յերկնային խորանսդ: Ծագեա առ մեզ զարդարութեան և  
զիմաստութեան զլյս քո, արա զմեզ որդիս լուսոյ և որ-  
դիս տունջեան:

Որպէս զի 'ի գալ աւուրս երկիւզածութեամք կա-  
տարեսցուք: Զի դու ես օգնական և փրկիչ մեր և քեզ  
վայել է փառք, իշխանութիւն և պատիւ. Այժմ և.

### Աղօթք հանգստեան:

Տէր Աստուած մեր, դու պահեա զմել զի գիշերիս  
յայսմիկ և յամենայն ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ քո  
բեկոեալ պահեա զմիսս և զիսորհուրդս մեր: Որպէս զի  
յամենայն ժամ քեզ պահպանեալ լիցուք յորոգայթից  
թշնամոյն և քեզ հանցուք զօրհութիւն և զփառս հօր  
և որդւոյ և Հոգւոյն Արքոյ. Այժմ և.

### Մաղթանք հանգստեան:

Զհանգստեան զաղօթս և զաղաշանս ընկալ. Մար-  
դասէր Աստուած, 'ի հաճոյս բարերար կամաց քոց, մեր  
մեղաց և բազում յանցանաց թողութիւն շնորհեա, և  
քեզ փառք յաւիտեանս ամէն:



**Գ. ՏԵՐ—ՂԵԼՈՆԳԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

1.	Մայրենի լեզու, ա. տարի. հինգ. տիս	35 կ.
	Գումարով առնողներին	30 կ.
2.	Մայրենի լեզու, բ. տարի. երրորդ տիս	40 կ.
	Գումարով առնողներին	35 կ.
3.	Մայրենի լեզու, գ. և դ. տարի	70 կ.
	Գումարով առնողներին	60 կ.

Տպագրվում է Զեռնարկ ուսուցիչների համար. բացադրութիւն.

**Մ. Լ. առաջին տարուայ:**

2013  
4530



